ԷՋՄԻԱԾԻՆ

1972

Ա

Ախ 146



ԻԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱ-15954

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս



1972



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1972 թ. հունվարի 6)

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Մշտանորոգ հավատքով և անմար հույսով, հրաշակերտ սուրբ Էջմիածնից ձեզ բոլորիդ բերում ենք լույս ավետիսը Քրիստոսի ծննդյան և աստվածահայտնության:

Այս ավետիսով, ինչպես երկու հազար տարիներ առաջ, այսօր էլ մեր հոգու աշխարհի բարձունքներից՝ լսում ենք պատգամ-երգը հրեշտակների. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Երկու հազար տարիներ շարունակ, աշխարհի վրա ոչ մի տեղ ու երբեք, ոչ մի երգ չի հնչել այնքան քաղցր, և ոչ մի պատգամ՝ այնքան փրկարար:

Այնուամենայնիվ սակայն, ո՜վ մարդկային ճակատագիր, երկու հազար տարիներ հետո, աշխարհը տակավին հեռու է կենսագործված տեսնելուց՝ երկնառաք պատգամը քաղցր ու փրկարար:

Այս սուրբ պահին չենք մտածում մեղադրանքի կամ անեծքի խոսք ասել, և ոչ էլ հանգցնել լույսերը հույսին:

Տարակույս չկա թե մարդկային աշխարհը տառապում է իր մեղքերի ու իր տկարությունների հետևանքով: Մարդը ինքն իր մեջ է կրում արմատները բոլոր չարիքների: Սակայն, Քրիստոս փրկիչը մեր, մղում է մեզ լինել լավա-

տես: Քրիստոսանվեր կյանքի ճանապարհը, ճանապարհն է չարի արմատները պոկելու և խափանելու:

Աստված իր միածին Որդուն աշխարհ առաքեց, օգնելու համար մարդկությանը, ինքնափրկումի պայքարի մեջ, ցույց տալով նրան ճանապարհը փրկության, հայտնելու համար նրան ճշմարտությունը գերագույն, առաջնորդելու համար նրան դեպի կյանքը անվախճան:

Մարդկային աշխարհը փրկել անիրավություններից ու բռնություններից, փրկել կեղեքումներից ու խտրականություններից, փրկել ատելության թույնից ու պատերազմների կրակից, նշանակում է ամենից առաջ վերափոխել, վերանորոգել, պայծառակերպել մարդու հոգին, այսինքն նրա իմացականությունը, նրա կամեցողությունը, և մանավանդ նրա զգացումների խառնարանը:

Դա կլինի մեծագույն հեղափոխությունը բոլոր ժամանակների համար: Եվ այդ իսկ իրականացնելու համար է որ Քրիստոս Աստված մարդացավ ու աշխարհ եկավ: Նրա մեծ առաքյալը հրավեր ու պատգամ է կարդում մարդկանց բոլոր՝ «Սրբեցէք ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զանգուած» (Ա. Կորնթ. Ե 7): «Մերկացարուք զհին մարդն զործովքն իւրովք և զգենցարուք զնորն նորոգեալ ի գիտութիւն ըստ պատկերի Արարչին իւրոյ» (Կողոս. Գ 9—10): Սահա թե ինչու մենք հավատում ենք թե Քրիստոս տնական հեղափոխությունն է մարդկային հոգեկան աշխարհի, և դրանով է նա մանավանդ Փրկիչը ազգի մարդկան, իշխանը խաղաղության, արեգակը արդարության:

Մենք չենք ժխտում, մարդկային կյանքում՝ գաղափարական, ընկերային, տնտեսական զարգացման անհրաժեշտությունը և նշանակությունը նույն չարիքների վերացման ի խնդիր, սակայն մտածում ենք թե զարգացող գաղափարական, ընկերային, տնտեսական դրությունները ու օրենքները մարդիկ են կյանքի կոչելու, գործադրելու, և հետևաբար եթե մարդիկ իրենք նույնը մնան, միևնույնն է, արդյունքն էլ նույնը կլինի:

Սահա թե ինչու հավատում ենք թե մարդուն վերանորոգելու, պայծառակերպելու քրիստոնեական իդեալը մնում է այժմեական բոլոր ժամանակների համար, և մանավանդ մեր դարաշրջանի համար: Հիրավի, ինչքան զարգանան ու մեծագործ նվաճումների հասնեն՝ մարդկային իմացական հանճարը, գիտությունն ու տեխնիկան, այնքան ավելի անհրաժեշտ կդառնա մարդկանց զգացումների ու կամեցողության բարեշրջումը և նվաճումը՝ բարոյական հանճարի բարձունքների, որով կարող է հնարավոր դառնալ ազատագրումը մարդկային ցեղի՝ եսամոլության, նախանձի, ատելության ու տիրապետելու մոլուցքի թունավոր արմատներից:

Ինչքան տխուր է հաստատել՝ թե մեր օրերի աշխարհը տակավին լեցուն է նման չարիքներով:

Ինչքան տխուր է հաստատել՝ թե այսօր էլ տակավին աշխարհում այս ու այն տեղ հրահրվում է կրակը պատերազմների:

Ինչքան ծանր է մանավանդ մտածել՝ թե մեր օրերում, համայն մարդկության կյանքի հորիզոնի վրա, դեռևս առկա է անավոր սպառնալիքը ջերմամիջուկային աշխարհակործան հրդեհումների:

Եվ սակայն, ահա այս ողբերգական պահին, Հիսուս մեծ վարդապետը, պատգամում է մեզ՝ մերժել այս ճակատագիրը: Նա հրավեր է կարդում՝ կերտել նոր մարդուն, նման Աստուծո պատկերի, հաստատել սերն ու խաղաղությունը մարդկանց սրտերում, արդարությունն ու եղբայրությունը աշխարհում համայն:

Քրիստոսի անունով գործող բոլոր եկեղեցիները այսօր, նույն այս հավատամքով աղոթում են ու գործում, ու անհազանգ հնչեցնում՝ ընդդեմ անարդարությունների, ընդդեմ կեղեքումների, ընդդեմ ցեղային և այլ տեսակի խտրականությունների, ընդդեմ պատերազմների:

Հայաստանյայց եկեղեցին, այս սրբազան պայքարի մեջ միանում է իր բոլոր եկեղեցիներին՝ «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», «վասն խաղաղութեան հեռաւորաց և մերձաւորաց», առաջնորդված տեսիլքովը՝ համայն մարդկության եղբայրացման, իբրև ժողովուրդը միևնույն Աստուծույն:

Աստված է մեր խաղաղությունը: Աստված է մեր փրկությունը:

Փառք ծննդյան Որդվույն Աստուծո Հիսուսի Քրիստոսի, որ աշխարհին ընծա բերեց պատգամը՝ «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան»:

Սիրելի հավատացյալներ,

Խաղաղության և ժողովուրդների եղբայրության հրամայականը թանկ է ի մասնավորի մեր մայր եկեղեցու և մեր ժողովրդի համար, որովհետև բազում տարիներ շարունակ նրանց կյանքը եղել է տևական տառապանք ու նահատակություն: Հազիվ հիսուն և ավելի տարիներից ի վեր է, որ հայոց հայրենիքը վերածնվել է իբրև ազգային ինքնավար պետություն, ապահովելով հայ ժողովրդին խաղաղ, ապահով ու բարգավաճ կյանք՝ նյութական վերաշինության ու մշակութային ծաղկումի պայմանների մեջ: Նոր կյանքի կոչված, երգով, արևով ու սիրով կառուցվող շեն երկիրը մեր, Հայաստան աշխարհը, բոլոր իրավ հայերի՝ միակ ապավենն է այսօր, միակ մխիթարությունը, միակ հույսը:

Ահա թե ինչու, մեր աղոթքը՝ «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», ամենավառ իղձն է՝ փրկության ափին հասած մեր ժողովրդի:

Ամեն բանից վեր և ամենից առաջ, խաղաղություն թող լինի, և ամեն ինչ խաղաղությամբ թող լինի:

Քրիստոսակերտ սուրբ Էջմիածնից, Ամենայն Հայոց Հայրապետը, խաղաղության պատգամի հետ միասին ձեզ բոլորիդ բաշխում է Իր հայրական օրհնությունը և աղոթում ձեր ամենքի բարօրության ու արևշատության համար:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:

Շնորհավոր Նոր տարի:

Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Կպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇՆՈՒՏԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն
ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ ԼԱՅԵՂ Ե-ԻՆ (Բեյրութ),

Անտիոքի սիրիական կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի Պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՈՒԿԵՆ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Լիբանանի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԵԻՆ Բեյրութ),

Քենտրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին գերաշնորհություն
ՍՏԵՖԱՆԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ,
Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱՊԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. ԲԼԵՅԿԻՆ (Ժնև),

Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՑ ԳՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),

Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),

Մարսելի Արքեպիսկոպոս, Գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԵԻՆ (Մարսել),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԷՐՄԻՆԻՈ ՌՈՆԿԱՐԻԻՆ (Երուսաղեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների Ազգային խորհրդի ընդհանուր
քարտուղար, Գերապատիվ հայր ԷՐՈՒԻՆ ԷՍՓԻԻՆ (Նյու-Յորք),

Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել):

Մարդասերն Աստված, իր Միածին Որդին երկինքեն երկիր առաքեց, փրկելու համար մարդկային աշխարհը համայն, մեղքի, չարիքի ու մահվան կապանքներեն:

Այսօր Մենք հույժ երջանիկ ենք Ձեզի վերստին բերելու՝ Աստվածորդվույն սուրբ Ծննդյան ավետիսը, մաղթելու համար երկնային ամեն բարիք Ձերդ Սրբության և Ձեր առաքելահաստատ փառավորյալ եկեղեցիին ու ժողովուրդին: Մաղթելու համար նաև որ մեր օրերու խռովահույզ աշխարհն ու տառապող մարդիկ, իրենց հայացքը դեպի երկինք բարձրացնեն լուսավորվելու, վերանորոգվելու համար «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» փրկարար պատգամով, զոր իր սուրբ Ծնունդով Մանուկն Հիսուս ընծա բերավ աշխարհին:

Աղոթքի և ներշնչումի և հույսի այս սուրբ ժամին, բարի եղեք ընդունել Մեր եղբայրական սերն ու հարգանքը, ինչպես և Մեր սրտեն բխած մաղթանքը որ երկար ապրիք և տեսնեք Ձեր բոլոր սուրբ իղձերու հաջողությամբ պսակավորումը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծնընդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Երջանիկ ենք, Ձերդ ամենապատվության բերելու՝ Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի լուսահրաշ Ծննդյան ավետիսը, մաղթանքներով սրտագին որ Միածին Որդվույն շնորհները առատապես բաշխվին ձեր սուրբ Աթոռի միաբանության, ձեր կրոնական կրթական ու մշակութային հաստատությանց և համայն հավատացյալ ժողովուրդին ի շինություն և ի ծաղկումն հայոց հոգևոր կյանքին:

Սուրբ Ծննդյան շնորհներով, թող հավետ անսասան մնան Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին և վերածնած ժողովուրդն ու մայր երկիրը հայոց:

Քրիստոսակերտ սուրբ Էջմիածնեն տիրավանդ օրհնություն, սեր և խաղաղություն ընդ Ձեզ և ընդ ամենեայնց, ամեն։

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ։

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Արգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին։

*
* *

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Սրտի քաղցր պարտք կզգանք ներկայացնելու Ձեզի Մեր սիրաջերմ շնորհավորությունները և լավագույն մաղթանքները Նոր տարվան և ս. Ծննդյան տոնին առիթով։

Կաղոթենք Մեր սրտի խորերեն, որ Բեթղեհեմի Հիսուս մանուկը անշարժ և անսասան պահե Հայց. ս. եկեղեցին և ծաղկյալ ու պտղաբեր կյանք պարգևե համայն հայության որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի։

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

*
* *

Նոր տարվա և ս. Ծննդյան բարեպատեհ առիթով հարգանոք Ձեզ ենք ներկայացնում Մեր անունից և Սրբոց Հակոբյանց միաբանության և մեր հաւատացեալների կողմից մեր սրտագին բարեմաղթությունները և աղոթում Ամենակալին, որ Ձերդ Սրբության շնորհի երկարատև առողջություն և բազում երջանիկ տարիներ՝ լի հաջողություններով, ի բարգավաճումն և ի հաստատություն մեր Մայր Աթոռ ս. Էջմիածնի։

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*
* *

Վեհափառ Տեր,

Ամանորը և ս. Ծնունդը կուգան մեզի բարիքներով բեռնավոր, եթե մենք պատրաստ ենք ընդունելու զանոնք: Այդ բարիքներեն առաջինն է Լույսը.

«Ի Հօրէ ծագեցար, լուսաւորել զարարածս,
Արդարութեան արեգակն, Տէր, փառք քեզ»:

Ու լույսը կլուսավորե աշխարհի բարոյական խավարի մեջ, սակայն դժբախտաբար «խաւար նմա ոչ եղեւ հասու»:

Ու տակավին կուգա Ան մեզի անհուն ուրիշ պարգևներու ձևին տակ— կուգա իբրև շնորհք, խաղաղություն, փրկություն, ճշմարտություն, կյանք, հաց ու գինի:

Թող Աստված սակայն պարգևե մեզի գերագույն շնորհը—ասոնք ընդունելու տրամադրությունը և կարողությունը:

Մեր սիրտը անձնապես, ու մեր պաշտոնական մարմիններու և հավատացյալ ժողովուրդի սիրտերը մշտապես լեցուն են սիրո և հարումի զգացումներով, հանդեպ Վեհիդ անձին, հանդեպ Մայր Աթոռին, և զորս կարտահայտենք Ամանորի և ս. Ծննդյան այս երջանիկ առիթով:

Աստված հաստատ ու փառավոր պահե զՁեզ առաքելական Ձեր Աթոռին վրա: Աստվածային հովանիին ..երբև միշտ անսասան մնա Մայր Աթոռն մեր սուրբ Էջմիածնի:

Շնորհավոր Ամանոր.

Շնորհավոր ս. Ծնունդ:

Ողջունիվ եղբայրական ջերմ սիրո մատչիմբ Օծելույդ ս. Աջին ի համբույր և մնամք միշտ խոնարհ աղոթակից Ձեզ՝

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ԱՍՏԱՄԲՈՒԼ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին Ձեզ ենք ներկայացնում Մեր շնորհավորանքը և սրտագին մաղթանքը, որ աշխարհում խաղաղություն լինի և ժողովուրդների միջև՝ բարի կամեցողություն ընկերային և ազգային արդարության պայմաններում, և մեր վերածնված մայր երկիրը շարունակի իր վերակառուցման ու զարգացման ընթացքը Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Ամենայն հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Երևան

Հանուն հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի, հաճելի է մեզ շնորհավորել Ձեր Նոր տարին՝ մաղթելով աշխարհիս խաղաղություն և մեր մայր հայրենիքին՝ տնտեսական, գիտական ու հոգևորմշակութային վերելք՝ ի խնդիր հայ ժողովրդի բոլոր ազնիվ իղձերի կենսագործման;

Մաղթում ենք նաև քաջառողջություն և շինարար, հայրենանվեր գործունեություն Ձեզ և մեր հայրենի կառավարության բոլոր հարգարժան անդամներին:

Խորին հարգանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Երևան

Մեր եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի անունից Ամանորի առթիվ ընդունեցեք Մեր և Մեր բոլոր գործակիցների հարգալից, բարի մաղթանքները Ձեր և Խորհրդի հարգարժան անդամների արևշատության և հայրենաշեն գործերի հաջողության համար:

Ամենայն Հայոց Հայրապետը և Իր բոլոր հավատարիմ գործակիցները կշարունակեն նաև հետ այսու խոսքով ու գործերով սրտեռանդն աշխատել ի խնդիր Հայաստանյայց եկեղեցու միության և համայն հայ ժողովրդի միասնության ամրապնդման, ինչպես և աշխարհի խաղաղության:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Էջմիածին

Ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները Նոր տարվա առթիվ: Թող 1972-ը խաղաղ ու բարեբեր լինի մեր մեծ հայրենիքի և ամբողջ աշխարհի համար:

Շնորհակալություն Ձեր սրտագին խոսքերի համար:

Խորին հարգանքով՝

ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

*
* *

Հաճեցեք ընդունել մեր շնորհավորանքները և լավագույն ցանկությունները Նոր տարվա առթիվ:

ԲԱԴԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

*
* *

Ձերդ Սրբություն,

Հաճեցեք ընդունել հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ ջերմ շնորհավորանքները Նոր տարվա առթիվ:

Կամենում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն և նոր հաջողություններ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման ազնիվ գործում:

ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ





ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐՅԱՆ

ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ*

Ս. Ծննդյան տոնին առթիվ

Աստվածպաշտությունը կրոնական այն զգացումն է որ բարեպաշտական պարտականություններու հետ գրեթե կնույնանա հավատացյալին մեջ, ու կուտա անոր հայտնի գնացք մը՝ իր Աստուծույն հավասար պաշտելու ինչ որ բարի է միանգամայն և աստվածային: Այդպիսի պաշտամունքի առարկան կըլլա ինքնին՝ Աստուծո և մարդոց սերն ընդհանրապես. և ո՛րևէ օտարոտի նկատում չի՛ հաշտվիր այդ մաքուր և անշահախնդիր ողջմտության հետ: Ճշմարիտ աստվածպաշտությունը ո՛չ սնահավատություն մըն է և ո՛չ ալ սակարկություն մը՝ անձնական արժանիքներ ստեղծելու համար հո՛ն ուր կպակսին անոնք. այլ է՛ այն՝ ինչ որ ավանդական կամ տափակ կանոնապահութենե մը անդին կանցնի ու կներշնչե մարդուն հետևիլ հոգեկան այն խորհրդավոր բերումներուն՝ որոնք, առանց զինքը զրկելու երկրավոր կյանքի մը իրական պահանջումներեն, մոտ կտանին Աստուծո պաշտամունքին, և ա՛յդ է անշուշտ որոշ հայեցողությունը Պողոս Առաքյալին՝ երբ «մեծ շահասվանառ» կկոչե աստվածպաշտությունը և կհամարի զայն «օգտակար ամեն բանի» (Ա Տիմ. Զ 6, Դ 7):

Պետք է ընդունիլ սակայն՝ որ քրիստոնեական հրահանգներով, բարի գործերով, անկեղծ համոզումներով շինված աստվածպաշտությունը բովանդակությունը չէ՛ նույնին, այլ հարկ է ունենալ ավելի բան մը՝ որ բուն **խորհուրդն** է աստվածպաշտության: Առաքյալը իր միևնույն թուղթին մեջ՝ զոր վերը հիշատակեցինք՝ նոր հայտնություն մըն ալ կուտա մեզի, հասարակորեն իմացված աստվածպաշտությունը վերածելով իր բարձրագույն իմաստին, և հրավիրելով ամեն որ գիտնանք ըմբռնել անոր խորհուրդը կամ խորությունը:

Արդ՝ եթե հավատացյալ մը հարցներ մեզի՝ թե ո՞րն է աստվածպաշտության **խորհուրդը,** պիտի հանձնարարեինք իրեն՝ կարդալ ս. Գիրքին սա համարը (Ա Տիմ. Ա 6):

«Ան որ մարմնով երևեցավ
Արդարացավ հոգիով.
Զինքն հրեշտակները տեսան,
Քարոզեցավ ազգերուն.
Աշխարհ իրեն հավատաց.
Ու վերացավ փառքերով»:

Այս տողերուն մեջ՝ որ ըստ հույն բնագրին ևս երգի մը հորինվածքն ունին՝ հավատացյալը պիտի դնե աստվածպաշտու-

* «Սիոն», Երուսաղեմ, 1928, № 1, էջ 2:

թյան խորհուրդին խտացումը, որ խտացումն է միանգամայն Հիսուսի պատմական և փրկագործական կյանքին: Կրնանք դիտել տալ հոս՝ որ խաչի անարգանքն ու մահվան արհավիրքը տեղ չունին այդ ստիքերոնին մեջ, որպես թե երգիչը ուզած ըլլար ըսել մեզի. հանուն Աստուծո, զվարթ ու հոգեզմայլ ներշնչումը գերագույն պետք մըն է բարեպաշտ քրիստոնեին համար, վասնզի աստվածպաշտության խորհուրդն է որ թեվավոր վերելքով մը կտանի կհանե զինքը երկրեն դեպի երկինք, հանդիսատես ընելով «մարմնով» երևցող աստուծո մը զորությանը՝ որ հավիտենական փառքերու մեջ կծըրարվի:

Թերևս ըսվի սակայն. ինչո՞ւ ուրեմն Առաքյալը շատ անգամներով ու մեծ խանդավառությամբ կխոսի իր **Խաչի ճառը**: Հայտնի է պատճառը. ան իր պաշտած Հիսուսին իրական գոյությունն ու կյանքի զոհաբերումը կուզեր հաստատել՝ երկրագունդին վրա. մյուս կողմեն հրեա և հեթանոս միտքերե փարատելու համար խաչի անողոք գայթակղությունը՝ ստեպ կդառնար այդ հարցին. մինչդեռ ճշմարիտ աստվածպաշտության ոգին՝ Հիսուսի երևումն ու փառավորումը միայն պիտի սիրեր հոչակել ցնծությամբ, մոռացնելի տալով պահ մը անոր մարմնավոր կյանքին արյունոտ վախճանը՝ որ չէր կրնար չհիշեցնել անիրավ մարդերու ոճիրն ու դատապարտությունը: Քրիստոնեության խորազգացության դրոշմը չի՞ կրեր արդյոք վերը մեջբերված նվագավոր պատառիկը, իսկատիպ գեղոնը՝ նվիրված մեր կրոնքի հաղթանակին. անոր մեջ ազգեր կքարոզվին և աշխարհ կհավատա Հիսուսի. բայց չարիքն ու չարերը չեն հիշվիր, ու մարդասպաններու եղեռնը ստվերած մը չի բերեր երանության այդ տեսիլքին: Այո՛, աստվածպաշտության խորհուրդին ա՛նկ է՝ չխառնել ուղղակի կամ անուղղակի ատելության ու վրեժխնդրության զգացում մը անհավատ հոգիներու դեմ. և ոչ ալ գայթակղության խայթ մը մոտեցնել հավատավոր միտքին՝ որ զգլխվա՜ծ ոտք կելլե փառաբանելու իր Տիրոջ աստվածային պաշտոնն ու մեծությունը:

* * *

Հետևելով մեր՝ նշանակած համարի յուրաքանչյուր տողերուն, կուզենք քանի մը խոսք ուղղել մեր հայ հավատացյալ եղբայրներուն և քույրերուն.

Ա.—**«Որ երևեցավ մարմնով».**—Հիսուսի ս. Ծննդյան օրվան առիթով՝ զոր քիչ օրեն պիտի տոնենք, անդրադառնանք մարդկային պատմության այն դրվագին՝ որ հիմն ու խարիսխն է աստվածպաշտության մեծ խորհուրդին:

Եկեղեցին՝ հին ու մարգարեական գուշակություններու համաձայն՝ կդավանի մեր Փրկչին «մարմնով» երևելու իրականությունը, զոր կարելի չէ՛ և պիտի չըլլա հերքել, ո՛րքան ալ հանդգնին ոմանք այլանդակորեն ուրանալ զայն:

Կա՛ սակայն կարևոր կետ մը՝ զոր պետք է լուսաբանել: Հրեական պատմության մեջ կրկնակ երևույթով կներկայանա մեզի մեսիական ակնկալությունը: Սպասված Փրկիչը, շատերու համար, օժտված պիտի ըլլար երկրավոր իշխանության բոլոր հանդերձանքներովը. ան պիտի թագավորեր քաղաքականորեն հուսահատած հրեին ճակատագիրը վերականգնելու համար, որով և մոսխսական եկեղեցին տիեզերական փարախը պիտի ըլլար հեթանոս ազգերուն: Մյուս կողմե, քիչերու համար թեև, Փրկչի մը երևումը պիտի շեշտվեր անօրինակ հանգամանքով մը. ան պիտի կրնար ազատարար մը ըլլալ, ո՛չ թե անջատ կամ սեփական գետնի մը՝ կամ Պաղեստինի հողին վրա կանգնելով իր դրոշը, այլ իբրև մարդ՝ ա՛յնպես ինչպես կծնի ո՛րևէ մահկանացու՝ **երևելով երկրի վրա ու մարդոց հետ ապրելով**՝ պիտի կատարեր իրեն հանձնված փրկության բարոյական պաշտոնը: Այս երկրորդ ակնկալությունն էր որ արդարացավ մեր Տիրոջ մարմնառությանն ու ավետարանած վարդապետության շնորհիվ, որով ընդհանուր եղբայրության մը բեղմնավոր սկզբունքները քարոզվեցան «ընդ ծագս տիեզերաց», և երկնավոր Հոր մը որդիներն ըլլալու ազատությունը շնորհվեցավ ամենուն: Արդ՝ ողջամիտ հավատացյալ մը, որուն աչքին առջև փայլատակող ստուգություն մըն է այսօր Հիսուս Քրիստոսի կատարած փրկարար դերը, շատ պետք չունի, կկարծենք, մի առ մի վերլուծելու ա՛յս կամ այն մարգարեին ընդ աղոտ գուշակությունները, գիտնալով՝ թե դարերու հեռավորությունեն դիտված մեսիական պատկեր մը չի կրնար համեմատվիլ այն կենդանի պատկերին հետ՝ որ Հիսուսով նկարվեցավ: Եվ իրոք, Ավետարանն է որ կլուսավորե այդ ամպամած մթությունները անցյալին, իր նոջեվ Եսային պիտի կրնար երկվանալ պահ մը, պիտի տատամսեր թերևս ծերունին Սիմեոն, եթե կանուխ չփակեր իր երջանիկ աչքերը, ինչպես Հովհաննես Մկրտիչ անգամ իր տկարացած համոզումներուն տառապանքն ունեցավ իր բանտին մեջ:

Ներվի մեզ հոս փակագիծ մը բանալ, հիշեցնելու համար՝ թե մեսիական ակնկալություններեն բոլորովին անկախ գետնի մը

ընդարձակ տարածությանը վրա՝ հեթանոս աշխարհն ալ, իր կարգին, մարմնավորված աստվածներու գոյության հավատաց և պաշտեց զանոնք, ինչպես հայտնի է. և գուցե տարակուսանքի մատնված միտք մը այդ խառնակ պաշտամունքի նմանությունը կարծե տեսնել Հիսուս Քրիստոսի մարմնառության մեջ: Մենք այդ սխալ հայեցողության վրա պետք չունինք ծանրանալու, միայն թե՝ հարց կուտանք անցողակի. մեր հեթանոս նախահայրերուն—և ուրիշ բազմաթիվ ազգերուն—երկրպագած Արամազդին կամ Միհրի խանձարուրները աշխարհի ո՞ր անկյունին մեջ քակվեցան. ո՞վ ծնավ զանոնք միս ու ոսկրով. ո՞րն եղավ անոնց դիրքն ու կյանքը: Եթե անոնցմե մին «Երկինք»-ն էր և մյուսը «Արև»-ը, անո՛նց նման ուրիշ աստվածներ ալ լոկ անձնավորումներն եղան բնական ա՛յս կամ այն երևույթներու կամ զորություններու, և ո՛չ թե տիրապես ապրող ու շնչող հոգիներ: Ինչո՞վ ուրեմն հնար է նույնացնել զանոնք Տեր Հիսուսի հետ, որ Բեթղեհեմի մեջ ծնավ ճի՛շտ մեզի նման, և իր նմաններուն նվիրեց իր անձը, կերպարանակից ընելու համար զանոնք իր փառավորյալ մարմնին: Զգուշանանք շփոթելե քրիստոնեական կրոնին իրականությունը հեթանոսական իմացումներու և երևակայության հետ:

Հիսուսի «մարմնով» երևելու պատմությունը՝ զոր Մատթեոս և Ղուկաս ավետարանիչները կավանդեն մեզի՝ միևնույն առանցքը չունի: Առաջինը՝ այրին կամ մսուրին վրա կանգ առնող նորաշնան աստղին տակ՝ որուն կհետևին ընծայաբեր մոգերը՝ վրդովեցուցիչ տեսարան մը կպարզե մեր աչքին, հավատարմորեն նկարագրելով «Հրեից թագավորին» ազդելիք խուճապը: Երուսաղեմի քահանաները կիպրտին նենգավոր սպառազինությամբ մը. Հերովդես կիտովի, կդավադրե. մանուկներ կկոտորվին. Հռաքելի լացին ձայնը կլսվի Հռամայեն. սարսափ, փախուստ կհաջորդեն իրարու, Էմմանուելի կյանքը փրկելու համար: Երկրորդը սակայն՝ ծիծղուն դաշտ մը կբանա մեր առջև, ո՛չ թե մեկ աստղի, այլ հանակ աստեղազարդ երկինքին ներքև, ուսկից կծագի Աստուծո փառքը. հրեշտակ մը՝ հետո հրեշտակներ կերևին. անոնց երգը կլսվի բարձրերեն. «մեծ ուրախություն» ավետող ձայները խաղաղության՝ հաճության կամ հոժար կամքի պատգամը կհնչեցնեն երկրի ու մարդկության ականջին. հովիվներ իրենց հոտերուն պահպանությունը թողած՝ կվազեն կուգան ողջունելու Փրկիչը կամ Օծյալ Տերը, ու կօրհնեն զԱստված: Ոչ մեկ գոռացող սպառնալիք նորածին Մանկան օրրանին մոտ: Ծնողական գորովանքով կտարվի ան իր Հոր տունը, ուր մարգարեություններ կիսոսվին, և հետո դառնալով Գալիլիա՝ կաճի, կզորանա **լի իմաստությամբ:** Այս երկրորդ ներկայացումը՝ ուր հավանական վտանգի մը հնհնուքը չզգացվիր բնավ՝ անուշ մթնոլորտ մը շնչել կուտա մեր հոգիներուն, և այդ հմայքով կփոխադրե զմեզ դեպի այն վայրը՝ ուր աստվածպաշտության խորհուրդը բացատրող երգը պիտի թրթռար: Ի՛նչ ձևով ալ տրվին մեզի ավետարանական պատմության այդ նախընծա դրվագները, մեր հավատքն այն է որ՝ երկրի վրա «մարմնով» երևցող Աստուծո Որդին փառքերով վերացավ դեպի երկինք:

Դուք որ այս հավատքն ունիք և կպահեք զայն, եկեք ձեր երկյուղած էության խորքեն երգելու, ս. Ծննդյան տոնին առթիվ, Հայ Քերթողին օրհնության սա սրտառուչ հրավերը.

«Խորհուրդ մեծ...

Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք, **զի վասն մեր մարմնացաւ»:**

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր տաճարում պաշտվում է Ծնընդյան Ճրագալույցի ժամերգություն, որին ներկա են լինում բազմաթիվ հավատացյալներ:

Ճրագալույցի ժամերգությանը և արարողություններին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի սաները ընթերցում են Դանիելի գրքի Երից Մանկանց օրհներգությունը:

Ճրագալույցի ժամերգությունից հետո սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծննդյան տոնի նախատոնակը և հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը:

Ժամերգության ավարտին եկեղեցական թափորը երգով ու շարականով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում է մայրավանքի աղն ու հացը, և միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծննդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, հինգշաբթի օրը, դեռևս վաղ առավոտից, հավատացյալների հոծ բազմությունը լցնում է Մայր տաճարն ու նրա շրջափակը: Առավոտյան պաշտվում է ս. Ծննդյան հանդիսավոր ժամերգություն:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. Ծննդյան պատարագին, որը հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»-ը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ Իր ոգեշունչ քարոզով ավետելու Քրիստոսի Ծննդյան հոգևոր բերկրանքը և ավետիսը եկեղեցուն և ողջ հայությանը:

Հայոց Հայրապետի քարոզը տպագրվել է սույն համարում (էջ 3):

Հավարտ ս. պատարագի հաղորդություն են առնում ինչպես հավատացյալներից շատերը, այնպես էլ սիյուռքահայ բազմաթիվ ուսանող-ուսանողուհիներ:

Ս. պատարագից հետո ավանդական շքով Մայր տաճարում կատարվում է Փրկչի մկրտության տոնը՝ Զրօրհնյաց հանդեսը՝ պատարագիչ տ. Կոմիտաս եպիսկոպոսի հանդիսադրությամբ:

Ս. Սեղանի առջև դրված են կաթսաներ՝ լցված ջրով: Պատարագիչ սրբազանը խաչը ջուրն է գցում, և տաճարի կամարների տակ հնչում են «Այսօր ձայնն հայրական» և «Ով զարմանալի» մեղեդիները:

Հավարտ Զրօրհնյաց հանդեսի Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Վեհարան՝ ընդունելության դահլիճը:

Հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորում է Հայոց Հայրապետին՝ ցանկանալով Նրան բաջառողջություն, արևշատություն և հովվապետական երկար-երկար օրեր՝ ի փառս Մայր Աթոռի շինության և պայծառության:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Նորին Սրբությունը: Նա իր խոսքի սկզբում վշտով անդրադառնում է Մայր Աթոռի, անձամբ Իր և ընդհանրական հայ եկեղեցու կրած կորստի՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի մահվան տխուր առիթին: Ապա Նորին Սրբությունը շնորհավորում է բոլոր ներկաներին՝ Ծննդյան տոնի առթիվ, օրհնում է ազգը ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին և խաղաղություն է բարեմաղթում ողջ աշխարհին ու համայն մարդկությանը:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռում ավանդական շուքով տոնվեց առաջին նախավկա և մարտիրոս ս. Ստեփանոսի տոնը:

Սովորաբար Մայր Աթոռում գեղեցիկ ավանդույթ է դարձել սույն տոնի ուրախ առիթով հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի ուսանողներից ոմանց սարկավագական աստիճանի շնորհումը:

Ուրբաթ երեկոյան Մայր տաճարում կատարվում է ս. Ստեփանոսի տոնի նախատոնակը: Օրվա հանդիսության շարականները կատարում են Մայր Աթոռի սարկավագները: Ժամերգության ավարտին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը կիսասարկավագության աստիճան է շնորհում հոգևոր ճեմարանի Բ լսարանի հինգ ուսանողների. «Արկանէ զբազկուրարն յահեակ բազուկն նորա, և տայ ի ձեռն զսկիհն դատարկ և զմաղզմայն, և զամենայն զգեստ պատարագին և զշուշփայն և զխորհրդատետրն»:

Շաբաթ առավոտյան սկսվում է հանդիսավոր ժամերգությունը: Հնչում են ս. Ստեփանոսին նվիրված քաղցրահնչուն «Նահատակ բարի Քրիստոսի», «Ընդ երկնայնոց», «Նախասարկաւագ և առաջին մարտիրոս» և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» շարականները, որոնց երգեցողության տակ նորընծաների հոգիները համակվում են օրվա խորհրդով:

Ուրախ է ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և հավատացյալների բազմությունը, որովհետև հինգ մատաղ հոգիներ իրենց նվիրում են հայ եկեղեցու հոգևոր սպասավորությանը:

Երեկ էր, երբ նրանք դեռ պատանիներ և անմշակ հոգիներ ոտք դրեցին հոգևոր ճեմարանից ներս, բայց վանական մթնոլորտում և իրենց դասախոսների շնչի ներքո աճեցին հոգով և մարմնով, ձեռք բերեցին հոգևոր և մտավոր գիտելիքներ և այսօր Մայր տաճարի ս. Սեղանի առաջ խոստանում են իրենց ողջ հոգեկան և իմացական կարողությունները ի սպաս դնել հայ եկեղեցու պայծառությանը և շինությանը:

Հանդիսավոր ժամերգությունը շարունակվում է մինչև Ճաշոց գրքի ընթերցումը, որից հետո տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը հոգևոր ճեմարանի տեսչության միջնորդությամբ և ազգիս Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ սարկավագական աստիճան է շնորհում Բ լսարանի ուսանողներ Վրեժ Նաջարյանին, Սամվել Պետրոսյանին, Հակոբ Խաչատրյանին, Նորայր Ավագյանին և Ավետիք Արաքաջյանին:

Ձեռնադրության հանդիսությունը կատարվում է ըստ Ձեռնադրության Մաշտոցի, սուրբ գրական ընթերցումներով, համապատասխան շարականներով՝ ոգեկոչելով «աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զնոսա ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Այնուհետև ձեռնադրիչ եպիսկոպոսը տալիս է օրհնությամբ «զսուրբ ուրարս», «իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս, յեկեղեցիս Աստուծոյ» և «հրաման խնկարկել և բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն»:

Ձեռնադրությունից հետո սկսվում է ս. պատարագը, որին սպասարկում են նորընծա հինգ սարկավագները: Պատարագում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես

Մի պահ ձեռնադրության արարողությունից

քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ, օրվա տոնի և ձեռնադրության խորհրդի վերաբերյալ պատարագիչ տեր հայրը քարոզեցիս ասում է.

«Մայր Աթոռ ս. Էջմիածնում վերջին տարիներին ավանդություն է դարձել ս. Ստեփանոսի տոնի օրը սարկավագական ձեռնադրություն կատարել:

Ահա այսօր մեր աչքերի առաջ, Միածնաէջ այս ս. կամարների տակ, հոգևոր ճեմարանի բարձր լսարանի հինգ սաներ Աստուծո կանչով առաջնորդված, ժողովրդի հոգևոր ծառայության ձայնին անսալով ծնրադիր իրենց ուխտը կատարեցին՝ նվիրվելու համար Տիրոջ սուրբ Սեղանին:

Սիրելի զավակներ, Ամենայն Հայոց Հայրապետը, ձեր դասախոսները, ձեր ծնողներն ու հարազատները, ինչպես նաև մեր հավատացյալ ժողովուրդը հուզումով և հոգեկան մեծ հրճվանքով վկաները եղան ձեր սուրբ ուխտի: Դուք վեր բարձրացրիք ձեր աղոթող ձեռքերը՝ ուխտելով ծառայել մեր սուրբ եկեղեցուն: Լուծը ծանր է, բայց բաղցր, եթե այն կրեք Աստուծո օգնականությամբ: Աստված ձեզ հետ, ձեզ հետ են նաև հայ եկեղեցու մեծ վարդապետների ոգին ու ժողովրդի լուսաշող պատմությունը: Ապավինեցեք նախ Աստուծուն և ապա ձեր հայրերի հավատքին, ունեցեք զոհողության և հայրենասիրության ոգի:

Դուք այս դրսեից սովորական ուսանողներ չեք, այլ ս. Հոգու շնորհներով հոգևոր սպասավորության կանչված արիասիրտ պատանիներ: Հավատում ենք, որ մի քանի տարիներ հետո պիտի կատարեք ձեր երկրորդ մեծ ուխտը, դարձյալ այս սեղանից՝ պատարագելու ու պատարագվելու համար հանուն Տիրոջ Սեղանին:

Աստուծո շնորհները ստացած եք, բայց եթե ձեր մեջ հավատքը, նվիրումի ոգին, աշխատասիրությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը չչորացնեք, ձեր ունեցած շնորհները կմեռնեն ձեր մեջ, և կյանքում կդառնաք վրիպած մարդիկ:

Այսօր ոչ ոք ձեզանից չի պահանջում ս. Ստեփանոս Նախավկայի նման ձեր արյունը թափելը: Բայց տարբերություն չկա նահատակության և զոհողության միջև: Ամեն ճշմարիտ ու հավատավոր հոգևորականի կյանքը ամենօրյա պատարագ է, տքնություն, զոհողություն, հանուն Ավետարանի ճշմարտության և մարդու հոգու փրկության և խաղաղության: Ս. Ստեփանոսի նման եղեք արիասիրտ և դժվարությունների առաջ չընկճվող: Ձեզ առաջնորդող ուժը լինի Քրիստոսի Ավետարանը և ձեր ժողովրդի պատմությունը:

Տարիներ առաջ եկաք այստեղ անկազմակերպ հոգով ու մտքով, բայց հավատքով ներծծվելու հոգևոր այս սպասավորության: Ձեր ստացած հայեցի և քրիստոնեական դաստիարակությունը, Հայոց Վեհափառ Հայրապետի հայրական ու ամենօրյա հոգատարությունը ձեզ մղեցին անվարան կրելու այս քաղցր լուծը: Դուք այստեղ սնվել եք նույն մոր երկու ստինքներից՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունից: Զդավանեք այն ոգուն, որ ձեզ կանչում է դեպի ծառայություն:

Այսօրվանից, այս բարձունքից, նոր կյանքով պետք է ապրեք: Միշտ առաջ նայեցեք, դեպի բարձունքները, «Աստուած խօսեցաւ ի բարձանց»: Պարտականության գիտակցությունը, ծառայության ոգին ձեզ միշտ առաջ թող մղի: Դուք այրվելով, լույս տալով է, որ պիտի ապրեք: Դուք Աստուծո գործի մշակներն եք դառնալու, Ավետարանի լույսն եք տանելու մարդկանց հոգիների մեջ:

Ձեր կյանքում ձեր առաջ թող բացվի ս. Ստեփանոսի և մեր հայրերի թափած արյունով ողողված Քրիստոսի լուսաշող ճանապարհը: Եվ դուք արիացած ու խանդավառ, համարձակ ընթանաք այդ ճանապարհով:

Թող Աստուծո օգնականությունը լինի ձեզ հետ: Թող մեր սուրբ նախնյաց և նրանց արժանավոր հաջորդ ազգիս Վեհափառ Հայրապետի օրհնությունը լինի ձեզ հետ: Թող ձեզ հետ լինեն մեր ժողովրդի սերն ու վստահությունը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ս. պատարագից հետո տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և ճեմարանի տեսուչը նորընծաներին առաջնորդում են Վեհափառ Հայրապետի մոտ, որը հայրական սիրով ընդունում է Իր հոգևոր զավակներին, օրհնում նրանց հոգևոր ծառայության սուրբ ուխտը և հորդորում լինել ս. Ստեփանոսի նման Աստուծո գործին նվիրված հավատքի և աղոթքի մարդիկ:

Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի սեղանատանը, ի պատիվ նորընծա սարկավագների, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են նաև ճեմարանի դասախոսները:

Սեղանը օրհնում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ուսանողներին, մանավանդ նորընծա սարկավագներին ուղղված սրտի խոսք են ասում դասախոսներ Գ. Գյուլյանը և Ս. Անթոսյանը: Իսկ Ա լսարանի ուսանող Մ. Մարգարյանը ողջ ուսանողության անունից շնորհավորում է նորընծա սարկավագ եղբայրներին:

Այնուհետև նորընծա սարկավագների անունից Վեհափառ Հայրապետին, ինչպես նաև ճեմարանի դասախոսներին ուղղված երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում Ավետիք սարկավագ Արաբաջյանը:

Ճաշկերույթը վերջանում է ժամը 16.30-ին:

Բարեշնորհ Վրեժ սրկ. Նաջարյան. ծնվել է Հալեպ քաղաքում, 1952 թվականին: Ավարտել է Բեյրութի Թեքեյան նախակրթարանը, ապա սովորել է Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանում: 1968 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Սամվել սրկ. Պետրոսյան. ծնվել է 1955 թվականին Թբիլիսիում: Մանուկ հասակում ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան և ավարտել 6-րդ դասարանը: 1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հակոբ սրկ. Խաչատրյան. ծնվել է 1951 թվականին Երևանում: Ավարտել է միջնակարգ դպրոցը: 1966 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Նորայր սրկ. Ավագյան. ծնվել է 1948 թվականին Արտաշատում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1968 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Ավետիք սրկ. Արաբաջյան. ծնվել է 1951 թվականին Երևանում: Ավարտել է միջնակարգ դպրոցը: 1970 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:



ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1971 թվականի վերջին օրն է, դեկտեմբերի 31-ը, ուրբաթ: Արտակարգ աշխուժություն է տիրում հոգևոր ճեմարանի դահլիճում. մի առանձին ուրախություն է համակել բոլորի հոգիները:

Ամանորյա ավանդական սեղանները ծանրաբեռնված են հայրենի դաշտերի բարիքներով և ոսկեգույն գինիներով: Այդ սեղանների շուրջ բոլորել են Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը, դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, ծափահարությունների տակ սուտք է գործում դահլիճ և բազմում Իրեն հատկացված բազկաթոռին:

Ողջ դահլիճը հոտնկայս ունկնդրում է Հայաստանի պետական հիմնի երաժշտությունը, որը դաշնամուրի վրա կատարում է Գ դասարանի ուսանող Կիրակոս Հովհաննիսյանը: Ուսանողական երգչախումբը կատարում է «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Ամանորի սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Հանուն ճեմարանի տեսչության, Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը և ասում.

«Վեհափառ Տեր,

Մի քանի ժամ ևս և արդեն պատմություն դարձած հավերժի գիրկն է անցնելու հին տարին: Ինչպիսի՞ մտքեր ու հույզեր ասեք չեն համակում մեզ այս րոպեին:

Հավիտենական, միշտ կրկնվող ու նորոգ այս կյանքի մեջ մարդ արարածը իր գոյությունը հավերժացնելու, իմաստավորելու համար ստեղծել է ժամանակի հասկացողությունը իր կատարած աշխատանքները, իր անցած ուղին արժեքավորելու համար: Իսկ Նոր տարին մարդու համար դարձել է միշտ կրկնվող, վերանորոգվող կյանքի խորհրդանիշը:

Այսօր կյանքի վերելքի աստիճանների վրա կանգ առնելու պահն է: Մեզանից յուրաքանչյուրը հետադարձ մի հայացք է նետում: Ունենում ենք ուրախության և տխրության զգացումներ, ուրախանում ենք մեր հաջողություններով, տխրում, երբ տեսնում ենք հավերժի գիրկը գլորվող հին տարվա մեջ մեր բարոյական և հոգեկան վրիպումները:

Աստուծո կամքով, նվիրական այս պահին դարձյալ հավաքվել ենք հոգևոր ճեմարանի հարկի տակ՝ տոնելու Նոր տարին:

Համայն մարդկությունը իր կյանքի հնհին ընթացքի մեջ չունի մի որևէ օր կամ ժամ, որտեղ միասնական կերպով խորհի, մտածի ու ապրի տվյալ պահը: Հին տարվա վերջին ժամերը, րոպեները համայն մարդկությանը

մի ստածումի շուրջ են հավաքում, և հարցը ծառանում է բոլորիս առաջ. «Ի՞նչ կարողացանք անել հավաքապես և որպես անհատներ»:

Մեր ժողովուրդը այս տարի ևս բոլորեց խաղաղ, ստեղծագործական մի շրջան և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում: Շարունակվեցին կառուցվել հայրենի հողի վրա նոր ձեռնարկություններ, բնակելի շենքեր, մշակութային օջախներ, դպրոցներ և հիվանդանոցներ: Մեր ժողովուրդը ունեցավ տնտեսական, մշակութային, ազգային վերելքի մի շրջան:

Իսկ Մայր Աթոռ ս. Էջմիածնում և մեր բոլոր թեմերում այս տարի ևս, Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության անմիջական և հոգեվոր հովանու տակ շարունակվեցին մեր ազգային-եկեղեցական կյանքը ընդգրկող աշխատանքները: Յուրաքանչյուր ուխտավոր, որ ոտք է դնում ս. Էջմիածին, տեսնում է Ձերդ Սրբության հոգևոր, շինարար աշխատանքը, Ձեր հայրական վերաբերմունքը նաև դեպի հոգևոր ճեմարանը:

Ուրախ ենք նշելու, որ Ձեր բարձր կարգադրությամբ ս. Ստեփանոսի տոնի օրը սարկավագ ձեռնադրվեցին հոգևոր ճեմարանի Բ լսարանի հինգ սաներ՝ աճեցնելով թիվն ու որակը Մայր Աթոռի միաբանության և հայ եկեղեցու սպասավորության:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը այս նոր տարուն որպես նվեր ստացավ Բեյրութից ապսպրված արդիական հարմարավետ գրասեղաններ, սեղաններ ու աթոռներ, որի համար հոգևոր ճեմարանի տեսչությունը իր որդիական երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Տեր, Ամենայն Հայոց Հայրապետությունը, ս. Էջմիածինը հայ ժողովրդի կրոնական և ազգային հավատքի կենտրոնն է և այն հոգեկան ամրոցը, որ հայ ոգին միշտ կենդանի է պահում, այն հաստատությունը, որը համայն հայությանը կապում է հայրենիքին: Դուք, Վեհափառ Տեր, անհատական կյանք ունեցող անձնավորություն չեք, այլ համահայկական այս Հաստատության ընտրյալ Գահակալը, որի ամեն մի հրահանգը հայության համար սրբություն է, իսկ Ձեր աղոթքները՝ օրհնություն ու բարիք:

Շնորհավորելով նաև բոլոր ներկաների Նոր տարին, թույլ տվեք, Վեհափառ Տեր, բաժակ բարձրացնել Մայր Աթոռ ս. Էջմիածնի կենացը՝ Ձերդ Սրբության արևշատության կենացը՝ ասելով.

Կեցցե Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Կեցցե նրա արժանընտիր Գահակալը՝ մեր բոլորիս սիրելի Ամենայն Հայոց Հայրապետը»:

Գեղարվեստական իր ճոխ ծրագրով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մելիքանեջյանի շնորհալի ղեկավարությամբ, և կատարում է «Հայրապետական մաղթանք», «Զանճառելի լուսոյ մայր», «Կաղանդ է այսօր», «Սեղանն է առատ», «Հայոց գինին», «Կենաց երգ», «Այ Ֆոռկա-Ֆոռկա», «Ազգ փառապանծ», «Հայրենիքիս հետ», «Բամ փորոտան» և «Էրեբունի» խմբերգերը:

Արարատ սրկ. Գալստյանի նախաձեռնությամբ վերջերս ստեղծված և նրա ղեկավարությամբ գործող էստրադային նվագախումբը, Ա լսարանի ուսանող Գրիգոր Քեշիշյանի մեներգությամբ, կատարում է «Քելե, քելե», «Երևան», «Գլորիա՛ ալելուիա», «Ալագյազ» և «Գարուն Երևան» երգերը:

Այնուհետև խորհրդավոր լռության մեջ օրհնության խոսք է ասում ազգիս Վեհափառ Հայրապետը և բոլորին ցանկանում քաջառողջություն, արևշատություն և բարձր տրամադրություն: Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը շեշտում է, որ ս. Էջմիածինը և սայր հայրենիքը այսօր քան երբևէ վայելում են մի իսկական խաղաղություն, բարօր կյանք, որի նմանը հայ ժողովուրդը երկարաձիգ դարերի ընթացքում երազել է միայն:

Ապա Ա դասարանի ուսանող Միքայել Թուղլաջյանը և Բ դասարանի ուսանող Աղասի Բաբուջյանը երգեհոնի քաղցրահնչուն երաժշտության ուղեկցությամբ երգում են «Առաւօտ լուսոյ» մեղեդին: Ա լսարանի ուսանողներ Հրանտ Աղաջանյանն ու Ավետիս Արթինյանը դաշնամուրի վրա կատարում են մի հատված Գ. Եղիազարյանի «Սևան» բալետից, Բ լսարանի ուսանող Վրեժ Նաջարյանը՝ Շուբերտի «Ավե Մարիա»-ն, Գ դասարանի ուսանող Կիրակոս Հովնանյանը՝ իր հորինած «Հայկական պար»-ը:

Բ լսարանի ուսանող Ավետիք Արաբաջյանն արտասանում է Գ. Սարյանի «Օրացույց»-ը, նույն լսարանի ուսանող Հակոբ Խաչատրյանը՝ Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», Ա լսարանի ուսանող Վաչե Նալբանդյանը՝ Դ. Վարուժանի «Ցան»-ը, իսկ Ա դասարանի ուսանող Լևոն Բաղդասարյանը՝ Միխալկովի «Պոդ նովի գոդ» բանաստեղծությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված սրտի խոսք են ասում, հանուն Մայր Աթոռի միաբանության, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, հանուն Մայր Աթոռի պաշտոնեության՝ Պ. Շահբազյանը,

հանուն ճեմարանի դասախոսական կազմի՝ դասախոս Սամվել Անթոսյանը:

Հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության հանդես է գալիս Սամվել սրկ. Պետրոսյանը և Վեհափառ Հայրապետին ուղղված իր սրտի խոսքն ասում.

«Ամեն ոք սրտի անհուն բերկրանքով և ապագայի նկատմամբ բոցավառ սիրով ու բազում հույսերով է դիմավորում Նոր տարին:

Ամանորը մեզ առիթ է տալիս խորհրդածելու, քննելու, թե ինչպե՞ս, ի՞նչ արդյունավորությամբ անցավ անցյալ տարին:

Մեր՝ հոգևոր ճեմարանի ուսանողներիս համար անցյալ տարին եղավ արդյունաբեր ու բարեբեր մի տարի: Մենք արեցինք այն, ինչ որ կարողացանք՝ չնայած մեր ձգտումներն ու երազանքները շատ ավելին էին:

Կյանքը և գիտությունը, մեր բարեխիղճ դասախոսների շնորհիվ, մեզ շատ բան սովորեցրին: Ավելի ընդարձակվեց մեր մտային հորիզոնը: Մենք գիտության օվկիանում քայլ առ քայլ առաջ գնացինք, դեպի այնտեղ, որ տանում է գիտությունն ու Աստուծո սերը:

Կյանքը մի մատյան է, իր բազմաթիվ էջերով, որի յուրաքանչյուր էջը թերթվում է տարին մեկ անգամ, Ամանորի օրը: Ամեն անգամ, երբ թերթում ենք այն, մեր առջև պատկերվում է ապիտակ մի էջ, որը պետք է լցնենք մինչև տարեվերջ:

Լցնե՞լ միայն...

Արդյո՞ք բավական է այդքանը:

Հարկ է լցնել այն լավ գործերով, հայրենասեր ու եկեղեցանվեր ձեռնարկումներով, մաքուր ու ազնիվ հոգեկան ապրումներով և բարեգործություններով:

Իսկ այն ժամանակ քո խիղճդ հանգիստ կլինի:

Մենք սիրում ենք մեր ժողովրդին:
Մենք սիրում ենք մեր եկեղեցուն:
Մենք սիրում ենք Աստուծուն:

Ամեն մի քար, ամեն մի մատյան, ամեն մի մրմունջ ու հոգու կարկաչ, ամեն մի հերոսական դրվագ ու ողբալի էջ, որ կապված է հայ ժողովրդի և հայ եկեղեցու հետ, սուրբ ու նվիրական է մեզ համար:

Եվ մենք ամեն կերպ կաշխատենք՝ նոր տարվա ընթացքում ավելի ևս կապվել հայ ժողովրդին ու հայ եկեղեցուն, ծառայել նրանց ու համբուրել սուրբ ու հերոսական, քնքուշ ու նվիրական նրանց անունները:

Եվ այս ամենով փառավորել Աստուծո անունը:

Իսկ մեր հոգիների այսպիսի կերտմանը պարտական ենք Քեզ, Վեհափառ Տեր, և մեր սիրելի դասախոսներին:

Նոր տարին գրեթե բոլոր տարիքի մարդկանց սրտերում խինդի կայծ ու բերկրանքի շող է առաջացնում: Սարդիկ սկսում են սիրել իրենց նմաններին ավելի, քան մյուս օրերին: Եվ սիրով ողջունում են միմյանց.

—Շնորհավոր ձեր Նոր տարին:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի ուսանողության անունից շնորհավորել Քեզ և բոլոր ներկաներին՝ ասելով.

—Շնորհավոր Քեր Նոր տարին:

Եվ թող այս նոր տարվա թագավորության ընթացքում բոլոր անհաղթահարելի թվացող դռները բացվեն Քեր բոլորի առաջ:

Թող իրականանան Քեր և մեր երազանքները:

Շնորհավոր Նոր տարի»:

Հանկարծ հանգչում են դահլիճի լույսերը և խորհրդավոր մթության մեջ շարքով ներս են մտնում ուսանողները՝ վառված մոմերը ձեռքերին, տեղ գրավում երգեհոնի մոտ և անգիրեն լեզվով երգում Ծննդյան մի բանի սքանչելի երգեր ու բուռն ծափահարությունների արժանանում:

Այնուհետև Բ լսարանի ուսանող Ավետիք Արաբաջյանը դիպուկ և բովանդակալից կաղանդչեքներ է բաժանում ճեմարանի դասախոսներին և ուսանողությանը, որից հետո սկսվում է վիճակահանությունը, և ներկաներից շատերը շահում են գեղեցիկ և ճաշակով ընտրված իրեր:

Ամանորյա սույն հանդեսը ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Շնորհավոր Նոր տարի:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 2-ին, կիրակի.—Նոր տարվա առթիվ Մայր տաճարում առաջին ս. պատարագն է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Դու, Տէր, զայս ամս եւս ի լրումն հասցուցեր» բնաբանով, խորհրդածություններ է կատարում Նոր տարվա առթիվ, և սրտագին բարեմաղթություններով շնորհավորում է Հայոց Հայրապետի, հայ ժողովրդի և միաբանության Ամանորը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Ս. պատարագը և եկեղեցական այլ արարողությունները կատարում են հոգևոր ճեմարանի սաները՝ բարեշնորհ Արարատ սրկ. Գալստյանի ղեկավարությամբ:

Հունվարի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 13-ին, հինգշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: Ս. պատարագի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

Հավարտ ս. պատարագի ս. Գայանեի վանքում, տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գերեզմանի վրա, կատարվում է հոգեհանգիստ:

*
* *

Հունվարի 15-ին, շաբաթ.—Տօն ծննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

*
* *

Հունվարի 16-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում Հովհաննես Մկրտչի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի հոգեհանգստյան պաշտոն է կատարվում Նուպար Կյուլպենկյանի հիշատակին՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Հունվարի 17-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են կիսամյա քննությունները, որոնք շարունակվում են մինչև հունվարի 26-ը:

*
* *

Հունվարի 17-ին, երկուշաբթի.—Այսօր, հին տոմարով ս. Ծննդյան տոների առիթով եկեղեցական տոնակատարություններին մասնակցելու համար, Ռոստով է մեկնում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, Թբիլիսի՝ Ժիրայր և Կտրիճ սարկավագները, Կիրովաբադ՝ տ. Նշան քհն. Բեյլերյանը և Եղիշե սրկ. Բաղրամյանը, Արմավիր՝ Շավարշ սարկավագը:

*
* *

Հունվարի 23-ին, կիրակի.—Բարեկենդան Առաջաւորաց պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Հունվարի 25-ին, երեքշաբթի.—Այսօր Վենետիկի Մխիթարյան վանքի միաբան հայր Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյանը ուխտավորաբար ժամանում է ս. Էջմիածին:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո հայր Եփրեմը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունը ստանալու:

Հայր Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյանը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հոգևոր ճեմարանում կդասավանդի որոշ առարկաներ:

*
* *

Հունվարի 29-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Կորյուն ծ. վարդապետը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունը ստանալու:

Նույն օրը Մայր Աթոռ է վերադառնում տ. Աղան վրդ. Բալիոզյանը, որը 15 օր առաջ մեկնել էր Երուսաղեմ, ս. Ծննդյան տոների առիթով:

*
* *

Հունվարի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը, իսկ քարոզում է տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» բնաբանով:



ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1906--1972)

Հունվարի լույս 4-ի գիշերը, ժամը 2-ին, ս. Էջմիածնում, իր բնակարանում, 65 տարեկան հասակում, արյան զեղումի հետևանքով վախճանվեց Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Հայոց Հայրապետը, Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու Հայաստանյայց եկեղեցին մեծ կորուստ կրեցին:

Մեր եկեղեցական-ազգային կյանքից վաղաժամ հեռացավ հոգևոր ու բարոյական արժանիքներով հարուստ և օժտված բարի

ու հայրենասեր մի հոգևորական, որն իր ամբողջ գիտակցական կյանքը առանց մնացորդի նվիրել էր Հայաստանյայց եկեղեցու հոգևոր սպասավորության նվիրական գործին:

Հանգուցյալ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ավագանի անունով Հայկ, ծնվել է 1906 թվականի մայիսի 16-ին Վանում, բերդակցի հայ հավատավոր գյուղացու ընտանեկան հարկի տակ:

1915 թվականի ապրիլի վերջին, Վանի հերոսական ինքնապաշտպանությունից հետո, պատանի Հայկը իր համաքաղաքացիների հետ գաղթում է իր ծննդավայրից և բազմահազար վասպուրականցիների հետ հասնում Ղամարլու (այժմ՝ արտաշատ), ուր երեք տարի հանախում է գաղթականաց վարժարանը և ապա հաստատվում Երևանում, ծնողների հետ:

1917 թվականի կեսերին վասպուրականցի գաղթականների մի մեծ խմբի հետ վերադառնում է Վան և հազիվ տուն-տեղ դարձած, նոր արհավիրքներ են հասնում և նոր դժբախտության և ողբերգության դուռ է բացվում Վասպուրական աշխարհի պատմական հայ ժողովրդի համար:

Գաղթականի ցույը ձեռքին անտուն ու տնավեր է լինում ողջ Վասպուրականը. «Կուժ մի արցունք առ իմ այրած հայրենիք»:

Պատանի Հայկը 1918 թվականին ծնողների հետ գաղթում է Սալմաստի վրայով դեպի Պարսկաստան՝ տարագրության արյունոտ ճանապարհի վրա կորցնելով ծնողներին ու հարազատներին:



Դագաղի մեջ

1920 թվականին, որբության կրակե շապիկը հագած, ընկնում է Բաղդադ և ընդունվում Հայկական բարեգործական ընդհանուր միության Նահր Օմարի հայկական որբանոցը՝ նույն ողբերգական տխուր ճակատագրին ենթարկված իր համաքաղաքացի ընտանիքների՝ տ. Սիոն, տ. Զգոն, տ. Սերովբե, տ. Եղիշե, տ. Հայրիկ սրբազանների հետ:

1922 թվականին պատանի Հայկը փոխադրվում է իր ընկերների հետ Երուսաղեմ՝ Արարատյան որբանոցը և 1923 թվականին ընդունվում ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանը, որը նոր էր բացվել տ. Եղիշե պատրիարք Դուրյանի օրով:

1927 թվականին, վարժարանի բառամյա ընթացքը հաջողությամբ ավարտելով, նույն տարում սարկավագ է ձեռնադրվում Դուրյան պատրիարքից և, 1930 թվականին ավարտելով ընծայարանի եռամյա աստվածաբանական դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում տ. Մեսրոպ եպս. Նշանյանից՝ վերանվանվելով տ. Հայկազուն աբեղա:

Այնուհետև, 1930—1957 թվականներին,

ժրաջան հոգևորականի առաջ բացվում է ս. Հակոբյանց պատմական վանքում կրթական-վանական, վարչական-հովվական ծառայության լայն ասպարեզ:

1930—1941 թվականներին ձեռնհասորեն վարում է Յաֆայի հայոց ս. Նիկողոս վանքի և հայ գաղութի տեսչությունը:

1941 թվականին վերադառնալով վանք, վարում է պատասխանատու տեսչական պաշտոններ՝ անդամակցվելով նաև վանական-վարչական վերին Մարմնին՝ Տնօրեն խորհրդին:

1954 թվականի մայիսին, իբրև Երուսաղեմի հայոց պատրիարքության ներկայացուցիչ, գալիս է մայր հայրենիք՝ մասնակցելու լուսահոգի Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Հայրապետի թաղման արարողությանը:

1955 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռում մասնակցում է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը՝ որպես Երուսաղեմի հայոց պատրիարքության և Պաղեստինի հայության պատգամավոր:

Տ. Հայկազուն վարդապետը նույն թվականի հոկտեմբերի 6-ին ս. Էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրվում նորընտիր Հայոց Հայրապետից:

1957 թվականի հոկտեմբերին տ. Հայկազուն սրբազանը, ընդառաջելով Հայոց Հայրապետի հրավերին, ընդմիշտ վերադառնում է ս. Էջմիածին և ստանձնում նախ հոգևոր ճեմարանի վերատեսչությունը, ապա Մայր տաճարի լուսարարապետությունն ու Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետությունը՝ մինչև իր մահը՝ 1972 թվականի հունվարի 4-ը:

Հունվարի 4-ին, երեքշաբթի օրը, ժամը 16-ին, հանգուցյալ սրբազանի մարմինը եկեղեցական թափորով լուսարարապետարանից փոխադրվում է Մայր տաճար և դրվում Իջման ս. սեղանի առաջ, ուր և կատարվում է հոգեհանգստյան արարողություն:

Հանգուցյալ սրբազանի մարմինը Մայր տաճարում մնում է մինչև հունվարի 5-ը, չորեքշաբթի, ժամը 11-ը, երբ եկեղեցական թափորով փոխադրվում է ս. Գայանեի վանք:

Հունվարի 7-ին, ուրբաթ, մեռելոցի օրը, ս. Գայանեի վանքում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, հանդիսավորությամբ կատարվում է տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի վերջին օծման և թաղման կարգը:

Հոգեհանգստյան ս. պատարագը մատուցում է և վերջին օծման կարգը կատարում Ադրբեջանի թեմի հայոց առաջնորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հոգեհանգստյան սուրբ պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի քառաձայն երգչախումբը՝ խմբավար Խորեն Մելխանեջյանի ղեկավարությամբ:

Ս. տաճարը լիքն է սգակիր բազմությամբ: Հանգուցյալ սրբազանը վերջին սրտառուչ «Ողջույն»-ն է տալիս իր եկեղեցուն, իր ժողովրդին, «Ողջո՛ւն քեզ, սուրբ եկեղեցի, ողջո՛ւն քեզ, սեղան սրբութեան... Դասք քահանայութեան... Ողջո՛ւն ձեզ, մանկունք եկեղեցւոյ և համօրէն ժողովրդականք... Ես Ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն»:

Հայոց Հայրապետը տխուր ու վշտի տակ ընկճված առաջնորդվում է ս. Սեղան՝ Իր դամբանականը խոսելու: «Եղիցի նա որպէս Ծառ որ տնկեալ է ի գնացս ջուրց» (Սաղմ. Ա 3) բնաբանով, Հայոց Հայրապետը Իր բովանդակալից և սրտառուչ դամբանականի մեջ խոսում է տ. Հայկազուն արքեպիսկոպոսի մահով Մայր Աթոռի, Իր և հայ եկեղեցու կրած մեծ կորստի մասին և ապա վեր հանում հանգուցյալ սրբազանի ծառայությունները Երուսաղեմում և մանավանդ ս. Էջմիածնում, 1957—1972 թվականներին, որպես Իր անմիջական գործակցի, Մայր տաճարի լուսարարապետի և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետի հավատավոր, բարի ու ազնիվ և հայրենասեր հոգևորականի:

Հայոց Հայրապետի դամբանականը ընդհատվում էր հաճախ արցունքներով:

Հավարտ ս. պատարագի Վրաստանի հայոց թեմի առաջնորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի նախագահությամբ կատարվում է հանգուցյալ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի թաղման կարգը:

Հանգուցյալ սրբազանի մարմինը ամփոփվում է ս. Գայանեի վանքում՝ միաբանական գերեզմանատանը:

Հանգուցյալ սրբազանի վրա հուզումնալից դամբանական է խոսում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, որը 1929 թվականից Երուսաղեմի հայոց և ապա Մայր Աթոռում տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հետ կապվել էր 43 տարիների անամպ բարեկամությամբ ու պտղառատ գործակցությամբ:

Դամբանական է խոսում նաև Երևանի հայ ավետարանական համայնքի կողմից վերապատվելի Սարգիս Կոնսուլյանը:

Հանգուցյալ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի հիշատակին կատարված հոգեհանգստյան սուրբ պատարագին և վերջին օծման ու թաղման կարգի կատարմանը ներկա է լինում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի

նախագահի տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը:

Թաղման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հայրենաբնակ հարազատների՝ Արամ և Պերճուհի Դավթյան ընտանիքի անդամների ցավակցությունները:

Ժամը 15.30-ին վանական սեղանատանը, տ. Կոմիտաս սրբազանի նախագահությամբ, տրվում է հոգեճաշ, ուր հանգուցյալ տ. Հայկազուն սրբազանի հիշատակը մի անգամ ևս ոգեկոչում են տ. Կոմիտաս եպիսկոպոսը, տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի՝ Սարգիս Մելիքսեթյանը, հոգևոր ճեմարանի դասախոսներ Գրիգոր Գյուլլանն ու Սամվել Անթոնյանը:

Վերջում, օրվա տխուր արարողությունները եզրափակելուց հետո, տ. Կոմիտաս սրբազանը շնորհակալություն է հայտնում բոլոր ներկաներին, որ հարգեցին հանգուցյալ սրբազանի հիշատակը՝ եկան բաժանելու Մայր Աթոռի վիշտն ու մեծ կորուստը:

Տ. Կոմիտաս սրբազանը բարեմաղթություններ է կատարում Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռի անսասանության և պայծառության համար:

Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի մահվան տխուր առիթով, հանուն Վեհափառ Հայրապետի, ցավակցական հեռագրեր են ստացվում, խորունկ վշտով և միսիթարության եղբայրական ջերմ զգացմունքներով, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խորեն Ա կաթողիկոսից, Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքից, Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք պատրիարքից, թեմական բոլոր առաջնորդներից, հովվություններից, ազգային-եկեղեցական մարմիններից, ինչպես նաև բոլոր եկեղեցիներից և այլ բազում անձնավորություններից:

Հայոց Հայրապետի անունով ցավակցական հեռագրեր էին ուղարկել նաև ՀՍՍՀ Սինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, Սիյունքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահ Գրիգոր Տեր-Գրիգորյանը, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լ. Խաչիկյանը և բազում այլ անձնավորություններ:

Խո՜ւնկ ու աղո՜թք տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նվիրական հիշատակին:



ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՊԱՅԾԱՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Թեև դժվար է հավատալ, բայց փաստ է, անողոք փաստ: Չկա այլևս մեր սիրելի սրբազանը: Մեզնից ընդմիշտ հեռացավ մեր բարեկամը, մեր հարազատը, մեր սիրելին: Մեզնից հեռացավ այն պայծառ հոգևորականը, որ ավելի քան տասնհինգ տարի վանքը լցրեց իր հմայքով, իր անսահման նվիրումով, իր ծառայական ոգով:

Թռչունի նման թռավ-գնաց սրբազանը. գնաց՝ առանց ազդանշանի, առանց նախապես մեզ պատրաստելու վշտի անողոք հարվածներին: Վիշտը այսօր բռնել է մեր կոկորդից, սեղմում է: Չգիտենք՝ ինչ է կատարվում մեզ հետ. ժամ առ ժամ խորանում է կսկիծը, ակնհայտ է դառնում կորստի մեծությունը: Մեզ համար դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ սրբազանը մեզ հետ չէ, մեզ հետ չի լինելու: Էլ չենք տեսնելու նրան՝ սև կամ սպիտակ կապա հագած վանքի բակում զբոսնելիս. էլ չենք տեսնելու նրան՝ բարի ժպիտը դեմքին՝ բանվորների մոտ, գրասենյակում, հոգևոր ճեմարանի ուսուցչարանում, Մայր տաճարում: Էլ չենք տեսնելու նրան՝ Ամենայն Հայոց Հայրապետի կողքին բազմած՝ Նրա հետ զարդարելու համար մեր հավաքույթներն ու մեր հանդիսությունները: Կարծես երազ էր, ցնդեց. անցավ ու գնաց: Պակասեց միայն մի հոգի. բայց կարծես մի պահ վանքը դատարկվեց: Այնքան հզոր էր Հայկազուն սրբազանի անձնական հմայքը:

Տասնհինգ տարի առաջ նա այստեղ եկավ հեռու Երուսաղեմից. եկավ՝ Ամենայն Հայոց Հայրապետի առաջին իսկ կոչին և միշտ մնաց Նրա կողքին: Ծառայեց առանց սակարկության: Գնաց այնտեղ, որտեղ նրան կանչում էր պարտականությունը: Ծառայեց խոնարհությամբ, սրտի հոժարությամբ: Գանգատ չուներ, տրտունջ չուներ. կատարում էր միայն իր պարտքը՝ ծառայության մեջ փնտրելով ու գտնելով իր վարձատրությունը:

Հայկազուն արքեպիսկոպոսը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առաքելատիպ հոգևորականներից մեկն էր՝ սնված նրա ժողովրդասիրական ավանդություններով, ճշմարիտ, պայծառ հայրենասիրությամբ: Ծնողներից որը՝ հայկական արհավիրքը նրան թրծել էր իր կրակների մեջ: Նա ամրակազմ էր, համառ էր և անընկուն: Նա տեսել էր հայկական գողգոթան, ուստի և անսահմանորեն սիրում էր մեր այս հայրենի մի կտոր հողը:

Հայկազուն սրբազանը աշխարհ տեսած մարդ էր. եղել էր բազմաթիվ երկրներում, բայց երբեք, երբեք նրան չէր հրապուրել, չէր հրապուրում օտար դահլիճների փարթամությունն ու շքեղությունը: Նա կարոտում էր Հայաստանին, սիրում էր նրա օդն ու ջուրը, լուսավոր ներկան: Նա սիրում էր մեր կիսակործան վանքերի, տաճարների խոսող լռությունը: Սիրում էր մեր սրբավայրերի մամռակալած քարերը:

Հայկազուն սրբազանը արտակարգորեն

համեստ էր. մեծ էր նա իր խոնարհությամբ, սրտի անապատ բարությամբ, վարակիչ կենսուրախությամբ, պայծառ լավատեսությամբ: Մարդահանճությունն ու արծաթասիրությունը երբեք չկարողացան տեղ գտնել նրա վարքի մեջ: Նա խորշում էր ստից, կեղծիքից, ստորաքարշությունից: Մամուռան երբեք չկարողացավ գերեվարել նրան: Բաց էր նրա դուռը, բաց էր նրա սեղանը, բաց էր նրա քսակը, բաց էր նրա սիրտը: Նա կիսում էր հացը բոլորի հետ: Բացառիկ էր սրբազանի հյուրասիրությունը:

Հայկազուն սրբազանը վանքի բարի ոգին էր. նախանձ չուներ, թշնամի էր խռովության: Ուր գնում էր, հետը տանում էր խաղաղություն, սեր և համերաշխություն: Նա Ամենայն Հայոց Հայրապետի առաջին գործակիցն էր և Նրա անդասալիք զինվորը: Ծառայում էր սիրով, անսահման նվիրումով:

Հայկազուն արքեպիսկոպոսի մահվամբ՝ մեծ է մեր կորուստը, և անմխիթար՝ մեր վիշտը: Բայց մենք մխիթարվում ենք նրանով, որ նա պայծառ հիշատակ թողեց: Մարդ եկավ ու մարդ գնաց այս աշխարհից: Պատվով, արժանապատվությամբ անցավ իր նապարհը: Մահը կարող է խորտակել միայն ինչ նյութական է, ինչ կորնչական: Մահը չի կարող խորտակել գեղեցկությունը, գնրեզմանել ճշմարտությունը: Հայկազուն սրբազանը ապրող, կենդանի ճշմարտություն էր, ճառագայթող մի ոգի, որ սնվում էր հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի ակունքներից: Մենք երբեք, երբեք չենք մոռանա մեր սրբազանին: Մեր հիշողության տախտակից երբեք չի ջնջվի նրա պայծառ անունը: Մենք՝ ճեմարանի դասախոսներս, սրբությամբ կշարունակենք նրա կրթական-դաստիարակչական գործը, որ ճշմարիտ ժողովրդասիրության, ճշմարիտ հայրենասիրության և ճշմարիտ եկեղեցասիրության պայծառ օրինակ էր:

Խունկ ու արցունք և օրհնություն նրա պայծառ, անթառամ հիշատակին:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԽՈՍՈՒՄ Է՝ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԻՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի ուրախ առիթով, որպես Նրա թանկագին հյուրը, հոկտեմբերի 2—16 օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում և հայրենիքում էր գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանը:

Ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում տիար Ալեքս Մանուկյանի հայրենական տպավորությունները, տպագրված Բեյրութի «Զարթոնք» օրաթերթի դեկտեմբեր 7 և 8 համարներում, որը գրի է առել Զարեհ Մելքոնյանը:

ՀԱՐՑՈՒՄ.—**Կրնա՞ք ձեր ընդհանուր տպավորությունը ամփոփել մեկ նախադասության մեջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ.—Փորձեմ,—«վերադարձա Հայաստանեն գոհ, ուրախ, լավատես»:

— **Որքա՞ն են այն գլխավոր երևույթները, որոնք ձեր ուշադրությունը գրավեցին ամենեն ավելի:**

— Կասկած չկա թե Հայաստանը իրապես պետականություն ունեցող երկիր մըն է. հո՛ն է վարչամեքենան: Իսկ պետական պատասխանատուները իմ վրաս ձգեցին շատ նպաստավոր տպավորություն՝ թե՛ իրենց լրջությամբ և թե՛ իրենց խանդավառությամբ որպես կարող հայեր:

Հայաստանցի հայը, ըլլա ղեկավար թե պարզ քաղաքացի, ունի այն խորունկ համոզումը և վստահությունը թե Հայաստանը իրականությո՛ւն է: Հա-

յաստանցի հայը Հայաստանը կենկատե կարևոր մեկ անդամը Խորհրդային Միության, և այս բանին համար հպարտ է:

Ան ինքնավստահ է թե անընդհատորեն կհասնի նոր սերունդ մը, որ ո՛չ միայն ի վիճակի է շարունակելու իր երեցներուն գործը, այլ նաև գերազանցելու զայն:

Հայաստանի հայը հպարտ է Հայաստանի նվաճումներով, ինքզինք կդասե աշխարհի ամենեն հառաջադեմ ժողովուրդներուն շարքին:

Հայաստանը «Հայաստան» է, ըսել կուզեմ՝ խորապես հայ է:

Ուշագրավ է այն պարագան, որ հառաջդիմություն արձանագրված է հավասարապես բոլո՛ր մարզերուն մեջ՝ նյութական թե մշակութային. Հայաստանը կոնյակ կարտադրե, և նաև **քրմփեությը**, ունի շքեղ թանգարաններ, ու նաև սկսած է մտածել շինելու մասին հանույքի և հանգստի վայելքին ծառայող հավաքավայրեր:

Էջմիածինը իրապես բարգավաճ է թե՛ հոգևորապես և թե՛ ընկերայնորեն:

— Որպես ճարտարարվեստական՝ ի՞նչ է ձեր տպավորությունը Հայաստանի գործարաններեն:

— Հայաստանի ծավալով և միջավայրով երկրի մը համար՝ արտադրությունները շատ լավ են: Գործարաններուն կարգուսարքը, արտադրության եղանակն ու արդիականության չափը գոհացուցիչ են:

— Պիտի ուզեի՞ք մանրամասնել ձեր տպավորությունները Էջմիածնի մասին:

— Ակներև է թե ժողովուրդը կհարգե ու կսիրե Վեհափառը և մեծ համարում ունի անոր նկատմամբ: Տարակույս չկա թե Վազգեն կաթողիկոսին ներկայությունը այդ գահին վրա՝ օրհնություն մը եղած է և է Էջմիածնին համար: Խոսելով վանքին մասին՝ պետք է ըսել թե գործերը դասավորված են շատ լավ, կա հմայիչ և մաքուր մթնոլորտ: Օրական հինգ հարյուր զբոսաշրջիկ կայցելե Էջմիածին, շատերը ոչ-հայ: Կարժե տեսնել կիրակի օրերու հավատացյալներու բազմությունը. անհավատալի է պարզապես...: Վեհափառը հարգված է նաև պետության կողմե, որ ցույց կուտա անհրաժեշտ բաջալերանքն ու օգնությունը: ...Լավ վիճակի մեջ է նաև տպարանը: Վանքը իր բյուջեն 80 առ հարյուրը կգոյացնե տեղական միջոցներով,—մոմավաճառութենե, նվերներե, տպարանական գործերե...: Էջմիածինը կենսունակ է ու զորեղ թե՛ որպես հավատքի կեդրոն, և թե որպես հաստատություն: Դպրեվանքը ունի ավելի քան քառասուն աշակերտ: Սկսած է նորոգությունը Երևանի ս. Սարգիս եկեղեցիին: Նորոգության մեջ են շատ մը վանքեր ու տաճարներ:

— Նորություն իմացա՞ք Սևանի մասին:

— Ջրանցքին աշխատանքները կշարունակվին և պիտի ավարտին երկու տարիեն: Ջուրին մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը չեն զգար, նկատելով որ նույն մակարդակին վրա պահելը պիտի բավե կարիքներուն, մանավանդ որ ջուրերուն պակսելովը մշակելի տարածություններ բացված են և գտնված՝ հնարժեք առարկաներ: Ներկայիս կօգտագործեն նաև հատկապես փորված հորերու ջուրերը, թե՛ ոռոգումի համար և թե այլ պետքերու:

— Ըսի՞ք թե Հայաստանը հա՛յ է. կրնա՞ք բացատրություններ տալ:

— Ինչպես ծանոթ է՝ մեր անցյալի մշակույթը կրած է զգալի դրոշմը մեր հավատքին և եկեղեցիին: Արդ, ամենուրեք ներկա են թե՛ մեր անցյալը և թե մեր կրոնա-հոգեկան մշակույթին ազդեցությունները: Թատրոն, օպերա, երա-

ժշտություն (ներքին թե հրապարակներու վրա բարձրախոսներեն հնչող), ճարտարապետություն, պատմական հուշարձաններ, գրականություն, նկարչություն, այլ խոսքով՝ մշակույթը իբրև ամբողջություն կցոլացնե մեր անցյալը և մեր ոգին: Կա անշուշտ թե՛ պետական անձերու, թե՛ արվեստագետներու և թե պարզ քաղաքացիներու խոսքերեն, արարքներեն, կեցվածքեն շողարձակող հայկականությունը: Հայությունը առօրյա և ապրում է:

— Կուզե՞ք քանի մը բառ ըսել շինարարության մասին:

— Պարզապես ապշեցուցիչ է թիվը բարձրացող նոր բնակարանային շենքերու: Հարյուրավոր կառույցներ կշինվին նույն ատեն: Կխորհին թե հինգ տասը տարիեն ամեն ընտանիք նոր հարկաբաժին պիտի ունենա: Վստահ եմ թե ժամանակի ընթացքին պիտի բարելավվի նաև որակը այդ շինություններուն...: Ամեն տարի ութեն տասը հազար հայեր կներգաղթեն Հայաստան, և անոնք կստանան նոր բնակարաններ:

— Ի՞նչ է ձեր տպավորությունը մշակութային հիմնարկներեն և կեդրոններեն:

— Պարզապես հիանալի են, և ետ չեն մնար որևէ երկրի համապատասխան իրագործումներեն: Եվ լավը այն է, որ բոլոր այս հիմնարկներն ու կեդրոնները կծրագրեն իրենց նո՛ր շենքերը ունենալ գալիք հինգեն տասը տարիներուն, նոր, ա՛լ ավելի ընդարձակ շենքերը:

— Ի՞նչպես տպավորվեցաք ժողովուրդեն:

— Բոլոր այն անձերը, որոնց հետ հարաբերելու առիթը ունեցանք՝ հյուրասեր էին ու քաղաքավար, անոնք ըլլան պաշտոն ունեցող անհատներ թե պատահական մարդիկ: ...Երևանը արդիական և շատ գեղեցիկ քաղաք մըն է, և անոր փողոցներեն երթևեկող անցորդները գոհացուցիչ էին իրենց ներկայանալիությամբ: Քաղաքը մաքուր է և խնամված: Երևանը եվրոպական քաղաք մըն է, որ սակայն ունի իր ուրույն նկարագիրը: Իսկ խոսելով կյանքի մակարդակին առնչությամբ՝ պետք է ըսել թե համեստ բայց գոհացուցիչ կյանք մը կապրին: Չունին արևմտյան երկիրներու մեջ նշմարվող նոխությունները, բայց չունին նաև մեր մտահոգություններեն շատերը: Բժշկական խնամքը ձրի է, կենսաթոշակը՝ բավարար՝ համեստ ու հանգիստ կյանք մը ապրելու համար: Ձրի է նաև ուսումը: Հառաջադեմ ուսանողությունը կվճարվի իր անմիջական մանր ծախքերուն համար: Հո՛ն ուսանող արտասահմանյան աշակերտներ կստանան նյութական հատկացում, որ կբավե համեստ կյանք մը ապրելու համար:

— Եթե չեմ սխալիր՝ տեսակցություն ունեցաք վարչապետ Բադալ Մուրադյանին հետ:

— Այո: Վարչապետին հետ ունեցանք սիրալիր տեսակցություն: Ան հեղինակության տեր անձնավորություն մըն է: Խոսեցանք արտասահմանի մշակութային կարիքներուն մասին, և հատկապես հայագետ-պատմաբան ուսուցիչներու կարիքին մասին: Առաջարկեցի որ այդ ղրկվելիք հայագետ-պատմաբանները արտասահման գան իրենց ընտանիքներով հանդերձ և հոն հաստատվին: Խոստացավ գոհացում տալ այս խնդրանքին:

— Դուք պաշտոնական հյուրն էիք Վեհափառին: Ի՞նչ հավաքույթներ սարքվեցան ի պատիվ ձեզի:

— Թեև հյուրն էինք Էջմիածնին, այսուհանդերձ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ալ իր մնայուն ներկայացուցիչին միջոցով ընկերացավ մեզի: ...Անշուշտ ճաշկերույթ-հավաքույթներ կազմակերպված էին Էջմիածնին կողմե: Մշակութային կապի կոմիտեն ալ սարքեց հա-

վաքույթ մը։ Վերջին օրը ճաշկերույթի հյուրն էի մշակութային, գեղարվեստական, պետական անձնավորություններու. ներկա էին Վեհափառը, կրթական նախարարը, Սիլվա Կապուտիկյանը, Մշակութային կապի նախագահը, թանգարանին և համալսարանին տնօրենները և բազմաթիվ այլ ականավոր ներկայացուցիչներ։ Ըսեմ որ՝ հայաստանցիները լա՛վ ուտող և լավ խմող են։ Ես ջանացի լավագույնս ընել՝ անոնց հետվե՛ն հետևիլ կարենալու համար...։ Շատ մը ուրիշ նվերներու կարգին՝ ինձի տրվեցավ Հայաստանի 50-րդ տարեդարձի շքանշանը։

— Որևէ նոր նվիրատվություն ըրի՞ք։

— Էջմիածնի մեջ պիտի կառուցվի նոր շենք մը (միաբաններու բնակարան և հյուրանոց)՝ մեր նվիրատվությամբ։

— Հուզումի պահեր ունեցա՞ք։

— Մանավանդ երկու անգամ։ Առաջինը ունեցա որպես հայ. տարօրինակ էր,—ամեն մարդ հայ, անցորդը հայ, վարչապետը հայ, ոստիկանը հայ..., լեզուն հայ, խանութպանը հայ, թատրոնը հայ...։ Երկրորդը ունեցա Էջմիածնի մեջ։ Ես եկեղեցասեր եմ. ամբողջ քառասուն տարի դպրություն ըրած եմ. տարիներով «Էջմիածի՛ն» երգած եմ...։ Տարբեր է Էջմիածինը, իրապես մեծ է ան և իր արմատներն է խրած ո՛չ միայն մեր անցյալին մեջ՝ այլ նաև ներկային...։ Հայրենիքին և Էջմիածնի համերաշխ գոյակցումին գիտակցությանն բխող զգացումն էր որ հուզեց զիս մանավանդ։ Երանի՜ թե շատեր տեսնեն Էջմիածնի ուժին և սրբության այս մեծությունը..., որ նաև մեր ամբողջ ժողովուրդին մեծությունն ու ուժն է։

— Ի՞նչպես տպավորվեցաք երիտասարդներեն։

— Թեև բավարար առիթներ չունեցանք հարաբերելու երիտասարդության հետ, այնուհանդերձ կրնամ ըսել թե անոնք ներկայանալի էին,... և հիպպիներու չհանդիպեցանք մենք։

— Պակասներ, թերիներ ձեր ուշադրությունը չգրավեցի՞ն։

— Բայց պակասներ ու թերիներ կան բոլոր երկիրներուն մեջ։ Հայաստանը «ոչինչեն սկսած» փոքր երկիր մըն է. ժամանակի ընթացքին կարբագրվին այդ պակասներեն ու թերիներեն շատերը. Հայաստանը այսօր երեկվանը չէ՛։

— Վիկտոր Համբարձումյանին հանդիպեցա՞ք։

Այո։ Շինությունը սկսած է նոր աստղադիտարանի մը։ Հայաստանը համաշխարհային տարողությամբ գիտական կեդրոն մը դարձած է. միջազգային ժողովներ կգումարվին հոն հանախ։ Մեծապես տպավորվեցա Համբարձումյանեն։

— Ե՞թբ, կխորհիք, կրնա տեղի ունենալ ձեր հաջորդ այցը Հայաստան։

— Եթե մոտ ըլլար..., և եթե տարիքս ավելի թույլատու ըլլար՝ պիտի ուզեի ամե՛ն տարի այցելել, և վայելել Երևանի մշակութային կյանքն ու գեղեցկությունները, Էջմիածինն ու Հայաստանի բնությունը։ Պիտի ուզեի այցելել, նաև, գիշերով դիտելու համար լուսազարդված տոնական Երևանը, որ անհնման է։

— Փակելու համար այս տեսակցությունը՝ կուզե՞ք քանի մը խոսք ըսել։

— Ես զիս բախտավոր կնկատեմ որ Հայաստանն ու Էջմիածինը տեսնելու պատեհությունը ունեցա։ Հայաստանին մեջ գտա Էջմիածինը, Էջմիածնին մեջ գտա Հայաստանը՝ իրարմով ամբողջացած ու զորացած։

Վերադարձա գոհ, ուրախ, լավատես։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՄԱՂՈՒ ՆՈՐԱՎԱՆՔԸ

Հին Հայաստանում, կարծես, մի տեսակ կանոն է դարձած եղել այն, որ մենաստանները կոչելիս են եղել այն բնակավայրերի անուններով, որոնց սահմաններում նրանք գտնվելիս են եղել: Դա հատկապես անհրաժեշտ է եղել այն դեպքում, երբ գոյություն են ունեցել միևնույն անունը կրող մի քանի մենաստաններ: Այդպես են, օրինակ, Սյունյաց նահանգում գտնվող, Նորավանք անունը կրող երկու մենաստանները: Դրանցից առաջինը, որի մասին ցանկանում ենք խոսել, գտնվելիս է եղել Վայոց ձոր գավառում, Ամաղու գյուղին մոտիկ և վերջինիս անունով էլ կոչվել է **Ամաղու Նորավանք:** Իսկ մյուսը գտնվելիս է եղել Ծղուկ գավառում, Բղենի գյուղի մոտ և համապատասխանաբար կոչվելիս է եղել **Բղենո Նորավանք:** Ծղուկ գավառը հետագայում բաժանվել է երկու առանձին գավառների՝ Ծղուկ և Բղենո գավառներ: Մատենագրության մեջ Բղենո Նորավանքը մատնացույց է արվում Բղենո գավառում. հավանական է, որ այն կառուցված լինի այն ժամանակ, երբ Ծղուկ գավառը արդեն բաժանված է եղել երկու առանձին գավառների: Բղենո Նորավանքի կիսավեր կառուցվածքները գտնվում են այժմյան Գորիսի շրջանում, Գորիս քաղաքից՝ Շուռնուխ ավանի վրայով դեպի Տաթև գյուղը տանող կես ճանապարհին, ընդարձակ սարահարթի վրա:

Այդ նույն կանոնի ձևով էլ ընդունված է ասել, որ Հայաստանի ամենագեղեցիկ վայրը Լոռին է. և դա իրոք այդպես է: Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ Զանգեզուրն ու Վայոց ձորն էլ իրենց բնական գեղեցկությամբ չեն զիջում Լոռիին: Ահա Ամաղուի ձորը՝ խորունկ ու լայնահուն, անտառապատ-կանաչազարդ լանջերով, վառկարմրագույն հանքաքարի բարձրաբերձ ու անմատչելի քարափներով և կարկաչահոս ու սրընթաց գետակով: Իսկ ձորի աջակողմյան լանջին, կանաչներով շրջապատված, բարձր դիրքով բազմած է Ամաղու Նորավանքը՝ հայ մշակույթի հոյակապ կոթողներից մեկը:

Այցելուն, որքան էլ նա շտապելիս լինի, չի կարող մի պահ կանգ չառնել ձորաեզրին կամ ձորալանջին՝ դիտելու և, ոչ առանց հուզմունքի հիանալու այդ գեղեցիկ ու զմայլելի տեսարանով: Այդ տեսարանն առավել գեղեցիկ ու հիասքանչ է լինում արեգակի մայրամուտից քիչ առաջ, երբ արևի վերջին-մեղմացած ճառագայթները հանդիպելով ձորափի գույնզգույն ժայռերին, բեկվում են և անդրադառնալով գոյացնում անտառի ծառերի վրա, մի տեսակ նոսր միգանման ոսկեգույն շղարշ՝ ամբողջ ձորով մեկ:

Ամաղու գյուղը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանում: Այն Հայաստանի հնագույն բնակավայրերից է, որը մատենագրության մեջ հիշատակվում է դեռ վաղքրիստոնեական շրջանից: Բայց չնայած այդքան հնությանը, այնտեղ պահպանված շատ սակավաթիվ հուշարձանները վերաբերում են միայն միջին դարերին:

Ամաղու գյուղը նույնպես, ինչպես Վայոց ձորի մյուս բնակավայրերը, բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների հարձակումներին՝ ավերվել, թալանվել և ամայացել ու անմարդաբնակ է դարձել, սակայն նորից վերակառուցվել ու շենացել է: Վերջնականապես ավերվում և անմարդաբնակ է դառնում թուրք-թաթարական միջցեղային կռիվների ժամանակ՝ 16-րդ դարի առաջին կեսում: 18—19-րդ դարերում այդտեղ բնակություն են հաստատում վանեցի ու ալաշկերտցի գաղթականները, վերակառուցելով նաև ավերակ հին եկեղեցին: Սակայն 1856—1860 թվականներին նրանք լքում են Ամաղու գյուղը, ինչպես այդ մասին տեղեկացնում են ժամանակի հայ տեղագիրները, և գնում բնակություն են հաստատում շրջանի Այար (այժմ Ագարակաձոր) և Ենգիջա (այժմ Գանձակ) գյուղերում: Բայց անցած դարի վերջերին Ամաղուում նորից բնակություն է հաստատվում, այս անգամ աղրբեջանցիներով:

Ամաղու Նորավանքը գտնվում է գյուղից երեք կիլոմետրաչափ դեպի հարավ-արևելք, Ամաղու գետակի աջակողմյան ձորալանջին, մի փոքրիկ հարթակի վրա, անտառի մեջ:

Տասներեքերորդ դարի հայ նշանավոր մատենագիր Ստեփանոս Օրբելյանը տեղեկացնում է, որ շատ վաղ ժամանակներից Ամաղուի նեղ ու անձուկ ձորում, քաղցրահամ աղբյուրի մոտ կառուցված է եղել մի սքանչելի եկեղեցի՝ ս. Կարապետի անունով և, որ ամբողջ ձորը զարդարված է եղել խաղողի և մրգատու ծառերի թանձրախիտ այգիներով.—

> «Յառաջ քան զայս (Նորավանքի՝ Օրբելյանների կողմից կառուցելուց առաջ—Հ. Ե.) բազում ժամանակօք, վաղուցրբք և հնագոյն ամօք, ի նեղ ու անձուկ ձորակին այնմ, ի պատշանաւոր տեղւոջ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն սրբոյ Կարապետին՝ յոյժ սքանչելագործ և անարկու և անուանի մերձակայ սահմանացն: Եւ բղխեր մերձ նմին աղբիւր քաղցրահամ. և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այգեօք և թանձրախիտ ծառօք մրգաբերօք»[1]:

Մինչև այսօր էլ վանքին մոտիկ պահպանվել է պատմիչի նշած սառնորակ և քաղցրահամ ջրով այդ աղբյուրը, ուր այցելում վանքի հուշարձանները դիտելուց և ուսումնասիրելուց հետո պահ մի դադար է առնում աղբյուրի մոտ, ծառերի ստվերում՝ հանգըստանալու, զովանալու աղբյուրի սառնորակ ջրով և կրկին ու կրկին հիանալու բնության անմնան այդ գեղեցկություններով:

Իսկ Ամաղու գյուղի այժմյան աշխատասեր ու ժրաջան մարդու ձեռքով ավելի է ընդարձակվել խաղողի ու պտղատու ծառերի այգիները և ամբողջ ձորը վերածվել մի փարթամ ու գեղատեսիլ այգեստանի:

Այդ նույն Օրբելյանը տեղեկացնում է նաև, որ Սյունյաց նահանգի Բաղք գավառում գտնվող Վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը թողնելով Վահանավանքը, 1205 թվին գալիս է Վայոց ձոր գավառը և բնակություն հաստատում Ամաղու Նորավանքում և կազմում վանական միաբանություն.—

> «Ի 554 թուականին, էր եպիսկոպոս ոմն ի վանսն Յովհաննու՝ Յովհաննէս անուն, լցեալ ամենայն առաքինութեամբ. և բոլորովին զգեցեալ զՔրիստոս, յազգէ ազնուական որդի մեծափառ իշխանին Բաղաց Հասանայ: Այս Յովհաննէս յետ աներման հրոյ աշխարհին, բազումս ալեկոծեալ այսր անդր, եկն ի Վայոց Ձոր գաւառ եւ կամեցաւ բնակել ի խորոնոր անապատին Նորավանից, մերձ անառիկ տղեկին Հրասեկայ բերդոյն, առ հիւսզօր և մեծասքանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին: Համարձակ բնակէ ի նմա՝ ժողովեալ արս կրօնաւորս և ճգնազգեացս»[2]:

Ամաղու Նորավանքը իր զարգացումը սկսում է հենց այդ Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության ժամանակից, իր բարգավաճման գագաթնակետին հասնելով Օրբելյանների տիրապետության շրջանում: Օրբելյանները ժառանգելով Սյունիքը, իրենց վարչա-քաղաքական կենտրոնը դարձնում են Վայոց ձոր գավառի Եղեգիս ավանը (այժմյան Ալայազ գյուղը նույն Եղեգնաձորի շրջանում), այնտեղ կառուցելով իշխանական ապարանք, եկեղեցիներ և առավել ըն-

---

[1] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910 թ., էջ 346:

[2] **Ստ. Օրբելյան**, նույն տեղ, էջ 347—348:

դարձակում ու բարեկարգում այն, դարձնելով Հայաստանի խոշոր, նշանավոր ու բարգավաճ բնակավայրերից մեկը: Ժամանակի սատենագիրները գյուղաքաղաք, քաղաք, նույնիսկ մայրաքաղաք անուններով են կոչում այն:

Դրան զուգընթաց, Օրբելյանները Սյունիքի հոգևոր կենտրոնը, որը մինչև այդ գտնվում էր Տաթևի վանքում, փոխադրում են Ամաղու Նորավանք, միաժամանակ վերջինս դարձնելով իրենց տոհմական գերեզմանատեղին՝ պանթեոնը: Եվ, որպեսզի մարչա-քաղաքական կենտրոնը մոտ լինի հոգևոր կենտրոնին, նրանք իրենց վարչական կենտրոնը Եղեգիսից փոխադրում են՝ Ամաղու Նորավանքին մոտիկ գտնվող Արփա գյուղը: Այդտեղ նույնպես նրանք կառուցում են իշխանական ապարանք, որի ավերակների աննշան հետքերն են պահպանվել ի մի եկեղեցի, որը մինչև այսօր էլ կանգուն ու ամբողջական վիճակում է:

Օրբելյանները ավելի մեծացնում և ընդարձակում են Ամաղու Նորավանքը՝ կառուցելով այնտեղ նորանոր շքեղ ու հոյակապ հուշարձաններ: Նրանք, որպես սեփականություն վանքին են նվիրում բազմաթիվ գյուղեր, ագարակներ, այգիներ, հողաբաժիններ, ջրաղացներ, նույնիսկ վանքեր ու բերդեր և այլն: Այդ բոլորով հանդերձ Ամաղու Նորավանքը առավել հզորանում է թե՛ տընտեսապես և թե՛ քաղաքականապես:

Ամաղու Նորավանքը միաժամանակ եղել է միջնադարի հայ գրչագրության ու մատենագրության նշանավոր կենտրոններից մեկը: Այնտեղ են ապրել և ուսուցանել Սյունյաց հոչակավոր մետրոպոլիտներ Հովհաննես և Ստեփանոս եպիսկոպոսները, «անհաղթ հոետոր» Շնորհավոր քորեպիսկոպոսը և ուրիշներ: Այդտեղ է գրվել «Պատմություն Սյունյաց նահանգին» պատմական երկը՝ հայ մատենագրության գոհարներից մեկը:

Թե երբ է ավերվել, լքվել ու դադարել որպես մենաստան գոյություն ունենալուց այդ նշանավոր վանքը, ստույգ հայտնի չէ: Այնտեղ պահպանված 16-րդ դարին վերաբերող տապանագրություններ ունեցող գերեզմանները ենթադրել են տալիս, որ այդ ժամանակամիջոցում, այս կամ այն չափով, դեռ շեն էր մենաստանը: 1840 թվի երկրաշարժից ավերվում է նաև Ամաղու Նորավանքը և այդ ժամանակից վերջնականապես ամայանում և դադարում է որպես մենաստան գոյություն ունենալուց:

Ամաղու Նորավանքը կառուցվածքների մի ամբողջ կոմպլեքս է, որի կազմի մեջ մտնում են հետևյալ հուշարձանները.— (նկ. 1)



Նկար 1. Ամաղու Նորավանք.—Գլխավոր հատակագիծը

1. **Ս. Կարապետ եկեղեցի.**—Սա վանքի ամենահին կառուցվածքն է և, հավանական է, որ դա եղած լինի այն եկեղեցին, որի մասին հիշատակում է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, թե «...հնագոյն ամօք, ի նեղ և անձուկ ձորակին այնմ, ի պատշաճաւոր տեղւոջ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն սրբոյ Կարապետին...»: Այժմ այդ եկեղեցին ավերակ վիճակում է, նրա պահպանված մասերի ուսումնասիրությունը բերում են այն հաստատ համոզման, որ եկեղեցու նախնական շենքը ամբողջությամբ չի պահպանվել, այլ ժամանակի ընթացքում քանդվել և նորից վերակառուցվել է: Իսկ այդ վերակառուցումը, ամենայն հավանականությամբ, պետք է տեղի ունեցած լինի 9—10-րդ դարերում: Սա բազիլիկ տիպի մի կառուցվածք է, շարված սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

2. **Ս. Կարապետի անվան մյուս եկեղեցին, կամ ինչպես անվանում են նաև Ստեփանոս Նախավկայի անվան եկեղեցին**— գտնվում է նախորդ եկեղեցու հյուսիսային

կողմում՝ նրան կից (նկ. 2)։ Ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, այն կառուցել է տվել Լիպարիտ Օրբելյան իշխանը՝ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի միջոցով, ավարտելով այն յոթ տարվա ընթացքում՝ 1216—1223 թվականների ժամանակամիջոցում.—

Նկար 2. Ամաղու Նորավանք.—Ս. Կարապետի հայր Ստեփանոս Դ.-ախավիլայի անվան եկեղեցու արևելյան ճակատը

«Իսկ եպիսկոպոսն Տէր Սարգիս խորհեալ ընդ մեծ Լիպարտի՝ սկսանին միաբան մեծավաստակ աշխատանօք և անչափ ծախիւք շինել զգեղեցկայարմար եկեղեցին ի նորավանս. և աւարտեն զնա ամս՝ 7՝ ութ խորանօք, ի թուականին Հայոց 672. եւ մեծահանդէս ժողովով՝ եպիսկոպոսօք, վարդապետօք, գանագրութիւ իշխանօք, ազատօք և տանուտէրօք առնեն նավակատիս սրբոյ սանարին, ընդ որում էր և մեծ իշխանն Բուպակ որ ընծայէ սուրբ և նորակերտ քառաբանին յիւրոց հալալ արդեանց և հայրենեաց պտուղ բոլորահաւատ զագարակն Աղբերիս իւրով սահմանօքն...»[3]։

Այդ եկեղեցու կառուցման մասին, բացի մատենագրական վկայություններից, նրա ներսում, հյուսիսային և արևմտյան պատերի վրա պահպանվել են երկու արձանագրություն՝ հուշարձանի կառուցման վերաբերյալ, որոնք մեջ ենք բերում քիչ կրճատված և վերծանված ձևով.—

«Ի թվին ՈՀԲ (672+551=1223 թ.) կամաւն Աստուծոյ, ես Լիպարիտ, որդի Ալակումի և թոռն մեծին Աւրպելեանց, զի հայրն իմ Ալակումն քենեցաւ ի թագաւորէն աբխազաց, գնաց ի տունն Աթաբակի Ելտկուզանց և նա մեծաւ գաստով մեծարեաց զնա. ետ նմա զմեծ քաղաք Համիտն. ես Լիպարիտս՝ որդի նորա մանուկ գոլով դարձայ վերատին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգորի, եկի առ մեծ Աթաբակ իւանէ. հայրենեացն փոխան ետ զհրաշկաբերդ իւր կերովն և ես շինեցի զվանքս, որ կոչի Նորավանք, յառաջնորդութեան Տեառն Սարգսի Սիւնեաց վերադիտողի, շինեցի զեկեղեցիս...»։

«Ես Տէր Սարգիս, քեռորդի Տէր Ստեփանոսի՝ Սիւնեաց արքի եպիսկոպոսի, շինեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ և Լիպարիտին և նախնեաց մերոց և երկուց հարազատ եղբարցն, որ ապանան ի թուրքաց պատերազմաց. վասն որոյ աղաչեմ հանդիպողացդ յիշել զմեզ ի Քրիստոս»։

Եկեղեցու կառուցմանը իր միջոցներով մասնակցել է Ամաղու գյուղի բնակիչ Հասանը՝ շինելով հարավ-արևմտյան անկյունում եղած ստորին խորանը, որի մասին արձանագրված է խորանի հարավային պատի վրա, որը հետևյալն է.—Յանուն Աստուծոյ այս գիր է Տեր Սարգսի եւ ապաւաւորաց տուրք Կարապետիս, որ տվաք զխորանս Հասանայ Ամաղուեցւոյ, որ նորա հալալ արդեամբք շինեցաւ. ի տարին Բ. աւր ժամ հաստատեցաք զՊետրոսի և զՊաւղոսի տաւնին. Ս. Հասանայ, Ա. իր կնոջն...։

Ս. Կարապետ եկեղեցու կառուցման ձևը «գմբեթավոր սրահներ» տիպի և «կենտրոնագմբեթ» ոճերի մի տեսակ խառնուրդ է. այդ հանգամանքը նշանակալից չափով շեշտում է նրա կարևորությունն ու նշանակությունը հայ ճարտարապետության պատմության առումով։

Հուշարձանի հատակագիծը արտաքուստ երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների՝ ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևում հարդարված է կիսակլոր աբսիդը՝ բարձր բեմով։ Անկյուններում տեղադրված խորանները երկհարկանի են, բոլորն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր աբսիդներ։ Արևելյան կողմի անկյուններում եղած խորանների ստորին հարկերի մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, իսկ վերի հարկերի խորանների մուտքերը՝ աբսիդի մեջ, բեմի վրա՝ իրար դիմաց, ուր բարձրանում են քառաստիճան բարձ սանդուխքներով։ Արևմտյան կողմի անկյուններում տեղադրված խորանների մուտքերը բացվում են այդ կողմի խաչթևի մեջ՝ իրար դիմաց, ըստ որի վերին հարկի խորանները

[3] Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 356—357։

բարձրանում են ստորին հարկի խորանների պատերին կից կառուցված յոթ աստիճան ունեցող քարե կոնսոլ սանդուխքներով:

Խաչթևերի միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսասյուները միանալով կամարներով, իրենց վրա են կրելիս եղել երբեմնի գեղեցիկ գմբեթը: Միակ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է ժամատան մեջ և զարդարված է գլանաձև կիսասյունավոր շրջանակով: Արևելյան պատի մեջ, արտաքուստ մշակված է եռանկյունաձև հատվածք ունեցող երկու խորը խորշեր (նիշեր)՝ կամարաձև գագաթներով: Յուրաքանչյուր նակատից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ՝ գծավոր շրջանակներով: Ամբողջ շենքն ավարտված է «ավազաբար» հանքաքարի՝ խիստ ողորկ ձևով հղկած քարերով՝ ամուր կրաշաղախի միացությամբ: Հատակը և տանիքը պատած են սալքարերով: 1840 թվի երկրաշարժից քանդվել է եկեղեցու գմբեթը, պատերի վերին մասերը, թափվել է երեսապատ քարերի մի մասը, պատերի մեջ տեղի են ունեցել ճեղքեր:

3. Ժամատուն—գտնվում է ս. Կարապետ կամ Ստեփանոս Նախավկայի անվան եկեղեցու արևմտյան կողմում՝ նրան կից և վերջինիս հետ հարակցվում է առանձին մուտքով: Կառուցել է տվել իշխանաց իշխան Սմբատը 1261 թվին.—

> «Ապա ի սորա ժամանակս (Ստեփանոս եպիսկոպոսի—Հ. Ե.) մեծ և արքայաշուք իշխանն Սմբատ՝ որդի Լիպարտի, շինէ ժամատուն մի հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի աղօթարանի ի դրան սրբոյ նախավկային ի տաշածոյ վիմաց և ի կոփածոյ քարանց»[4]:

Ժամատան կառուցման վերաբերյալ՝ բացի մատենագրից վերը մեջ բերված տեղեկությունից, պահպանվել է նաև կառուցման մասին արձանագրությունը, որը փորագրված է շենքի ներսում, հարավային պատի վրա: Մեջ ենք բերում նշված արձանագրությունը որոշ կրճատումներով և վերծանված ձևով:

> «Ի թվիս ՉԺ. (1261) այս գիր յիշատակի և արձան անջնջելի իմ՝ Սմբատայ իշխանաց՝ իշխանի, որդւոյ մեծին Լիպարիտի... շինեցի զեկեղեցիքս, վերըսսահն Հոորոգեցի... և եռու իմ հայրենացն Բ. (երկու) գիւղ ի սուրբ Նախավրկայս՝ զԱւէշ ու Անապատ, եւ յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր Կիւրակաջրովն. Տէր Սարգիս և միաբանքս հաստատեցին զաւագ խորանն, որ հանապազ, պատարագ պարոնացն առնեն. զշաբաթն ու զկիրակի՝ Լիպարիտի, հինգշաբաթ՝ Ասփային, զերկոշաբաթ ու զերեքշաբաթ՝ Ելուկումին, չորեքշաբաթն՝ Իւանէին, ուրբաթն՝ Փախրադուլային... Արդ՝ որ յետ մեր ժառանգեն ի տեղոյս՝ յիմոց կամ յաւտարաց և այս հաստատեալ պայմանիս հակառակել ջանայ և կամ ի սուրբ եկեղեցւոյս հանել կամ զժամն խափանել՝ մեր մեղացն պարտական է...»:

Ժամատունը իր կառուցապատման, հարդարման ու մշակման յուրահատուկ ձևերով խիստ նշանակալից է և եզակի տեղ է գրավում այդ կարգի կառուցվածքների շարքում, ինչպես այդ մասին կարող է պարզ պատկերացում ունենալ ընթերցողը՝ ստորև մեջ բերված նկարագրությունից:

Բավականին ընդարձակ շենք է. նրա հատակագիծը քառակուսի տեսք ունի: Պատերը ներսից, ստորին մասում, մինչև երեք մետր բարձրությամբ հարթ են, յուրաքանչյուր պատին կից ձգվում են երկուական որմնասյուներ. նման մեկական որմնասյուներ էլ ձգվում են անկյուններից: Թե՛ որմնասյուները և թե՛ նրանց խարիսխները ու խոյակները իրենց մշակման ձևերով միանգամայն տարբեր են միմյանցից: Որմնասյուները միանում են որմնակամարներով, պատերի այդ մասում առաջացնելով ոչ խորը, լայն խորշեր: Արևելյան պատի որմնասյուները միացնող կամարը սլաքաձև է, որը շրջափակում է եկեղեցու մուտքի ճակատակալ քարը:

Արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ, որմնասյուների բարձրությամբ և նրանց արանքում դրված են մեծ կալունակներ: Այդ կալունակների և որմնասյուների վրայով, պատերին կից ձգվում է քարակերտ, գոտկանման լայն շերտ:

Այդ նույն երեք պատերում, վերը նշված գոտկաձև շերտից վերև եղած մասերում, յուրաքանչյուր պատի մեջ մշակված է երեքական խորը խորշեր, ըստ որում կենտրոնում եղած խորշերը համեմատաբար ավելի մեծ են, որոնց միջից բացվում են զույգ, բարձր լուսամուտներ: Վերջիններս արտաքուստ նեղ են, իսկ ներսի կողմից բավականին լայն բացվածքով և ուղղանկյուն կողերով: Այդ նույն խորշերում, նրանց ամբողջ բարձրությամբ, հատուկ պատվանդանների վրա դրված են մեկական գեղաքանդակ խաչքար: Վերջիններիս վրա նույնպես դրված են մի-մի կալունակ՝ պատերը կայուն և մասսիվ դարձնելու համար: Այդ իսկ առումով հիշյալ խաչքարերն ունեն ոչ միայն դե-

[4] Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 363:

կորատիվ, այլև կոնստրուկտիվ նշանակություն:

Շենքի երեսապատը և ծածկը իրականացված է գլխավորապես կարմրագույն հանքաքարի մաքուր տաշված քարերով՝ ամուր կրաշաղախի միացությամբ: Ծածկը գոց թաղի ձևով է՝ կենտրոնում ժամատներին հատուկ լուսանցքով՝ երդիկով: Տանիքը պատած է սալքարերով, որոնց մեծ մասը թափված է: Նկատվում է վերանորոգումների ու վերակառուցումների հետքեր: Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, մի փոքր մուտք էլ բացվում է հարավային պատի արևելյան ծայրից:

Ժամատունը հարուստ է շատ շքեղ և վերին աստիճանի նուրբ ձևով մշակված զարդաքանդակներով ու բարձրաքանդակներով: Գլխավոր մուտքի կիսակլոր ճակատակալ քարի վրայի բարձրաքանդակը պատկերում է Տիրամայրը՝ բազմոցին բազմած՝ մանուկ Հիսուսը գրկին, իսկ երկու կողմերում մի-մի մարդ՝ նրանց երկրպագելիս: Բարձրաքանդակն ամփոփված է ծաղկեհյուս նուրբ զարդաքանդակներով ու աղավնակերպ պատկերներով: Ճակատակալ քարը եզերող կամարը պատած է ստալակտիտ զարդաքանդակներով (նկ. 3):

Արևմտյան պատի ճակատամասում, գլխավոր մուտքից վերև բացված լուսամուտի սլաքաձև վերջավորությամբ ճակատակալ քարի վրայի բարձրաքանդակը պատկերում է Հայր Աստծուն՝ լայն ու երկար վերնազգեստով, գանգուր մազերով: Նրա աջ կողմում Հիսուսի խաչելությունն է պատկերված, իսկ ձախ կողմում՝ թևավոր մի հրեշտակ: Աստծու ձախ ձեռքում մարդկային մի գանգ է, իսկ աջ ձեռքով օրհնում է Հիսուսին: Ճակատակալ քարը եզերող կամարը զարդարված է ստալակտիտ նուրբ քանդակներով (նկ. 3):

Առաստաղի հյուսիս-արևելյան մասում եղած բարձրաքանդակը ներկայացնում է որսի տեսարան, ըստ որի՝ ծառս եղած առյուծը հարձակվել է՝ իրեն թրատելու պատրաստված հեծյալի վրա: Գմբեթը ներսի կողմից ունի ստալակտիտ բարդ կոնստրուկցիա:



Նկար 3. Ամաղու Նորավանք.—Ժամատան արևմտյան մուտքն ու լուսամուտը

(Շարունակելի)



ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Իսկ յորժամ յառաջին նուագի մտի ի պահարան Տաճարիս՝ որ **խորան** կոչիւր, որ և կայ և երևի արդ ըստ հին կազմութեան առ դրամբ նորակառոյց պահարանացս, գտի փոքր յոյժ և անձուկ և ոչ բաւական ի պարունակել զամենայն զգեստս՝ սպասս՝ և զանօթս Աթոռոյս, որ մի ի միոյ խառն և դիզադէզ զմիմեանսբ կուտակեալ մերձ էին յապականութիւն, և կարծել այնպէս էր տեսողաց, եթէ ոչ ոք խնամոտ էր լեալ և հոգածու պահպանութեան այնոցիկ և յայնպիսի անշքացեալ պայմանի գտանէին, մինչ զի և մնացելոցն զգեստուց, զարդուց և անօթոց ունէր հանդիպիլ վիճակի կորուսեալոցն առաջնոց, թող զի միաբանութեամբ Աթոռոյս չէր տեղի ուրեք ուր զշուրջառս մարթացեն առնուլ զիւրեամբք յաւուրս տօնից, այլ զգենուին ի դասին և յզգեստաւորիլ պատարագիչ եպիսկոպոսաց դժուարին յոյժ էր թագիւն որ ի գլուխս՝ ի դուրս գալ ի խորան անուանեալոյն, իսկ կաթողիկոսունք սակս ոչ գոլոյ յարմարաւոր տեղւոյ՝ զառաջեալ միոյ ի փոքր սեղանացն լինէին զգեստաւորեալք, վասն որոյ ի բարեկարգութիւն Մայր Տաճարիս և յապահով և ի վայելուչ պահպանութիւն նուիրական հնութեանց և եկեղեցական զարդուց և անգին մասանց սրբոց պանծալի յիշատակաց ի նախնեաց մնացելոց, յորոց զբազումս ոչ սակաւ աշխատութեամբ ի ձեռս բերի յայլ և այլ վիճակաց յորժամ յայց ելանել մեզ յաջողեցաւ քրիստոսաւանդ հօտին իմոյ սիրելեոյ, խորհեցայ զերիս ընդարձակագոյն պահարանս շինել, զորս Տեառն օգնականութեամբ ի հիմանց կառուցի, զառաջինն սակս հանապազօրեայ պիտոյից և գործածութեան զգեստուց և սպասուց. զմիջինն յաղագս սրբոց նշխարաց և այլոց սրբութեանց, և զերրորդն յատկացուցեալ վասն ամենատեսակ հնութեանց:

Եւ յետ բազում դժուարութեամբ ի գլուխ հանելոյ զշինութիւն պահարանաց յարևելս կոյս կցելոց ընդ Սուրբ Սեղանացն՝ յամի Տեառն 1869, և պատրաստեալ զնորաշէն ընկուզեայ դարանս, մինչ կամէի զետեղել զիւրաքանչիւրն ըստ իւրումն կարգի, տեսի զի արծաթեղէն և ոսկեղէն զարդք և անօթք Սրբոյ Աթոռոյս վասն անձկութեան տեղւոյն առաջնոյ, բազումք բեկեալ էին և խեղաթիւրեալք և շատք սևացեալ, նոյնպէս և բերեալքն իմ ի գաւառաց յոլովութեամբ ժամանակաց անցելոց զհետս կարի նսեմութեան և անշքութեան կրեին յինքեանս, ոչ բաւուք համարեցայ այնպիսի անվայել դրութեամբ զետեղել, այլ ընդ ձեռն ոսկերչաց ճարտարութեան յառաջին պատկեր շքեղութեան վերածել փոյթ կալայ՝ զբեկեալս և զնախատեալս նորոգելով և զպակասորդս ըստ կարի լրացուցանելով, և զամենեսին միանգամայն մաքրելով յաղտոյ և ի ժանկոյ, որով հնութիւնքն այնոքիկ թօթափեցին զաղտն անմաքուր և ի նորոյ զգեցան զվայելչութիւն, և պատրաստեալ օտպագիր թուանշանս, և կախեալ թելիւ զիւրաքանչիւր սրբազան անօթոց՝ նշխարաց սրբոց զգեստուց՝ Հայրապետական և Եպիսկոպոսական մատանեաց՝ գաւազանաց՝ պատուանշանաց և այլոց համայնից, որ ինչ էին սեփհականութիւնք նախորդաց իմոց Հովուապետաց և հովուաց և իմ, և որ ինչ ընծայաբերութիւնք ի Սուրբ Տաճարս ըստ կարելւոյն նուէր զժամանակ հնութեան իւրաքանչիւրոցն համառօտիւ բացատրեալ, և ապա ի գեղաշէն փայտակերտ և ապակեայ դարանս ուրոյն **ուրոյն** դասակարգութեամբ ամփոփեալ զետեղեցաք վայելչապէս, և զմի մի ի նոցանէ

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից և ԺԱ-ից:

արձանագրեալ բուանամաթօք ըստ տեսակաց և ըստ ճանգամանաց կազմեցաք զերկուս միօրինակ տուն-մարս, որոց մին պարտ է պահել միշտ ի ներքին պահարանի առաջ՝ և միւսն ի Հայրապետանոցի:

Արդ ճանաչելով իմ զարդ սրբութեանցն և հնութեանց՝ որոյ այսօր ի խնդիր են ամենայն ազգք լուսաւորեալ աշխարհաց, ոչ միայն յիմոց սեփհականութեանց ոչ երբէք դանդաղեցայ զառ իս եղեալ հին աւուրց դրամս, զոսկեայ գօտիս մարգարտայիս, զնկեղեցական զգեստս և զգաւազանս և այլն, և այլն, ի ժողովս հնութեանց նուիրել անանխանձաբար, այլ մանաւանդ առ ի բազմապատկել զթիւ գտելոցն զարդիս յիշատակաց ի նորակառոյց պահարանս, ոչ յապաղիմ հրաւիրել յաւետ ի նոյն գործ ազգօգուտ և Աստուածահաճոյ զաստենեսեան՝ որ էր այժմ և որ գալոց էր զկնի՝ զպատրիարքունս, զառաջնորդս, զվանահայրս վանուց և մենաստանաց, զվարդապետս, զքահանայս, զազնուազարմս և զհամօրէն ուխտաւոր հարազատ որդիս գերագահ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի՝ մասնակից լինել այսմ գործոյ նուիրատուութեամբ ամենատեսակ-ազգային հնութեանց ի բարեզարդութիւն և ի պարծանս լուսածին Մօր Հայաստանեայց՝ տեղւոյ ասեմ Իջման փառաց որդւոյն յաւիտենականի:

Եւ քանզի յեղեղուկ յոյժ և անկայուն լինին յաւէտ այն ամենայն գործք ու կարգադրութիւն, որոց չիցեն հիմնեալ ի վերայ հաստատուն կանոնաց բարեկարգութեան, ուստի և չկարեն զհետ բերել զցանկալին պտուղ եթէ կարճատեսք իցեն յապագային խնամք և հոգատարութիւնք ի պահպանութիւն կանոնացն, այր սակս այսու Հայրապետական կոնդակս կանոնադրեմ և իբրև կոտակ աւանդեմ յաջորդաց իմոց և ամենից Եպիսկոպոսաց և վարդապետաց միաբանից Սրբոյ Աթոռոյս, զի բանալին առաջին պահարանի մնասցէ միշտ առ Աւագ լուսարարն Տաճարիս, իսկ երկաթեայ դրանն՝ որ երկոքուրք բանալեօք բանի, մին մնասցէ առ Կաթուղիկոսն, և միւսն առ ժամօրհնող Եպիսկոպոսն: Նոյնպէս և երրորդ պահարանն ունի զերկուս բանալիս, յորոց մին մնասցէ առ աւագ լուսարարն, և միւսն առ Եպիսկոպոս ոմն ի միաբանից Աթոռոյս՝ որում և պատշաճ դատեսցի Հայրապետն յանձնել, որպէսզի ի դեպս հարկաւորութեան բանալոյ, առանց ի մի ժողովելոյ երից Եպիսկոպոսաց՝ յորս են բանալիքն՝ և փոխանորդի Հայրապետին՝ անհնար լիցի բանալ:

Բաղձանքս սրտի իմոյ և հոգւոյ այն է, սիրելիք իմ ի Տէր, զի գէթ յայսմհետէ աճեսցի թիւ պատուական յիշատակաց և հնութեանց յԱթոռս այս գերագահ ի կնդրոնն, ասեմ հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, ուստի պատուէր սիրոյ աւանդեմ գահաժառանգ յաջորդաց իմոյ և համօրէն միաբանից Սրբոյ Էջմիածնի, միանգամայն խնդրեմ գուն գործել յաւետ անթերի և ապահով պահպանութեան սրբոց մասանց՝ զգեստուց՝ զարդուց՝ անօթոց՝ և այլոց ամենից՝ որ ի պահարանս ժողովեցի, նախանձախնդիր հանդիսանալով ամբողջութեան նոցին և բարեկարգութեան յապագային, չմտաբերել և ոչ զօրել երբէք որևիցէ միջոցօք ձեռնամուխ լինել ի նոսա և չտալ բնաւ իրաւունս ձեռներեց լինելոյ չարամտաց և ախտացելոց կորստաբեր շահասիրութեամբ, և ոչ թոյլ ունել արտաքս տանիլ և ոչ զմին ի հնութեանց ի զարդուց և ի զկեստուց, և կամ ընծայել ունել զնշխարս Սրբոց և զայլս, զի մինչև ցաւուրս մեր տալով երբեմն իբրև առժամանակեալ և երբեմն ընծայելով ակամաւոր հիւրոց՝ պակասեալ են յոյժ ի նշխարաց սրբոց և ի թանկագին հնութեանց:

Իսկ եթէ իշխեսցէ ոք առանց խղճի մխել զձեռն չար մտօք յամբողջութիւն ի մի վայր ժողովեալ սրբութեանց և հնութեանց, եթէ զգեստուց՝ անօթոց՝ զարդուց և եթէ նշխարաց սրբոց, ո՛ր ոք և լինիցի այն ի հետագայից՝ պարտական գտանիցի առաջի աթոռ ատենին Քրիստոսի, և զմասն ժառանգութեան ընդ սեղանակապուտս ընկալցի ի հանդերձելումն, քանզի զսակաւաթիւ նշխարս պարծանաց փառաց ի մխիթարութիւն ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց ձկտի վատնել այնպիսին յօգուտ անձին և ի փառս անուան իւրոյ, ոտնակոխ արարեալ զօգուտ և զփառս Մօր իւրոյ Սրբոյ Էջմիածնի:

Այլ և պարտ վարկանիմ պատուիրել սիրելեացդ ի Քրիստոս, ջանալ զտպարան Աթոռոյս՝ զոր բազում աշխատութեամբ ծաղկեցուցեալ ընդարձակեցի, ի գործադրութեան լիցի միշտ և զհին և զնոր մատենագրութիւնս կարևորս ի լոյս ընծայելով, լուսաւորեսցէ զաչս մտաց հոգւոյ մանկանց նորոյս Սիովնի: Մանաւանդ յանձն առնեմ և աղաչեմ փոյթ մեծ ունել սակս հոյակապ ժառանգաւորաց ճեմարանի Մայր Աթոռոյս՝ զոր ի հիմանց կառուցի բազմազան նեղութեամբ և ազգի **ազգի** տառապանօք և ընտրանօք յամենայն կողմանց զմանկունս ուշիմս և զգաստս ժողովեալ ի նմա ըստ կանոնադրութեան իմոյ՝ դաստիարակել զմիտս և զսիրտ նոցա ուսմամբ և երկիւղիւ Տեառն, և ոգւով նախանձաց և ուղղափառ վարդապետաց խնամել և դարմանել զնոսա միշտ, և ի չափ հասակի կատարելութեան ժամանեալս ձեռնադրել ի վարդապետս, և պատրաստել յառաքելութիւն բարոյութեան, զի ըստ օրինակի երանելի սրբոց վարդապետացն առաջնոց տարցեն զԱւետարանն Տեառն մերոյ և զաւետիս յաւիտենական կենաց առ ամենայն որդիս Մօրն լուսոյ Սրբոյ Էջմիածնի, լուսատու լիցին Եկեղեցւոյ, նախանձաւոր պաշտպանի կրօնի և բարոզիչք բանին ճշմարտութեան և ազգութեան և դաստանութեան մերոյ և աւանդութեանց, տարածիչք դպրութեան լեզուիս և Աստուածահաճոյ առաքինութեանց, որոց քան զամենայն իրաց և հաստատութեանց առաւել պետս պետս ունի ազգս տառապեալ, քանզի ընդ ամենայն ժամանակս ազգ մեր ի ձեռն աննմուէր հովուաց և վարդապետաց Եկեղեցւոյ զոգի առեալ և ենեալ է ի կեանս և ի փրկութիւն և ի պակասիլ այնպիսեաց՝ մոլորեալ ի ճանապարհէն կենաց և անկեալ ի փառաց և ի զօրութենէ միութեան, և կործանեալ իսկ յանդունդս թշուառութեան:

Յիշեցէք, եղբարք, զի որպէս Մայր Աթոռս ի վերայ Արարատայ զիտրան սրբութեան իւրոյ հարեալ ընդ արևելս զփառաւորեալ քաղաք Աստուծոյ բարձրացեալ կայ ի լերին՝ որ ոչ ծածկի յաչաց ուստե-

բաց է դատերաց իւրոց՝ յեկեղեցեացն Հայաստանեայց, այնպէս և ուիտն՝ որ ի սմա՝ ունել ունի այարտս իբրև զերկնաքաղաքացի լուսաւորս՝ լուսով հաւատոյ՝ սրբութեան վարուց՝ ոգւով հաւատարմութեան և ողջամիտ վարդապետութեան օրինակ լինել համօրէն ուիտի Եկեղեցւոյ, և իբրև զկոյս մի սուրբ առաջի Քրիստոսի նախանձելի յաչս ամենեցուն և զսէր և զոգի բոլորեցունց ձգել զսրբութիւն Աթոռոյս: Մի թուլանալ ի բարեպաշտութեանց և ի խախտել և քայքայել զազգօգուտ աւանդութիւնս նախնեաց, զի մի ընդ փառաց մերոց առաջնոց ի հող իջցեն, և յայնժամ անարատ ոգին Հայաստանեայց բողոք կալցի զնովուաց Եկեղեցւոյ առաջի Քրիստոսի թէ, Տէ՛ր, քակեցին զցանկ նորա, և կթեն զնա անցաւորք: ճանապարհի, և խոզ և երէվայրի արածեցաւ ի ձեռատունկ դրախտիս, և կորեաք յերկրի յերեսաց հովուացն՝ զորս դու ոչ առաքեցեր Տէր, և այնպէս անէծս արձակեսցեն զհետ մեր:

Եւ արդ զայս ամենայն հաստատեալ ի մտի՝ և զարթուցեալ ի սրտի ձերում զահ և զերկիւղ աւուրն բարութեան, զգուշացարո՛ւք հաստատուն և անխափան պահել զաւանդս՝ զիշատակս բարեպաշտ ոգւոյ՝ և զայս իմ կտակ, աղօթակիցելով ընդ իս զի ողորմեսցի Աստուած աշխարհիս հայոց և Սրբոյ Սիօնիս, զորոյ զհիմունս ինքնին արկ, և ինքն փառօք և խորհրդովք իւրովք յաւիտեանս յաւիտենից ի սմա թագաւորեսցէ. Ամէն:

Գէորգ Դ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(Կաթողիկոսի ստորագրությունը կարմիր թանաքով)

Ի 25-ն դեկտեմբերի 1873 ամի Փրկչական,
Ի ԺԴ Քաղոցի ՌՅԻԳ ազգ. թուականիս,
Ի Ս. Էջմիածին, ի Վաղարշապատ:

№ 291

ՖԻՐՄԱՆ

(Թուրքերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 78.8×54.5 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապուն:—**Դատարկ թղթերը՝** չկան:—**Տողերը՝** ընդամենը 12 տող:—**Գծումները՝** աչքի չափով:—**Գիրը՝** արաբերեն (լեզուն՝ թուրքերեն):—**Զարդագրություն՝** Ֆիրմանի վերևի մասում կա բավականին գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի խարիսխը ունի մոտ 27 սմ. երկայնությունը, իսկ բուրգի բարձրությունն է մոտ 37 սմ.: Բուրգի ներքևի մասում միաձուլված գրված է մահմետական «Բիսմ իլլահ ռահման ռահիմ» բառերը, ոսկեգույն և կանաչ գույներով, իսկ բուրգի մեջ նկարված են ոսկեգույն ծաղիկներ և ճյուղեր: Բուրգի երկու կողմերում նկարված են զարդեր, ծաղիկների նման, վարդագույն, կապույտ, կարմիր և կանաչավուն գույներով:—**Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** անհայտ (Ֆիրմանի ստորագրությունը անընթեռնելի է):—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԸ դար:—**Վայրը՝** Թուրքիա:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիր Ֆիրմանը ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆիրմանի հետևի մասում)
Լիմայէ զախիրս չտան:
ՌՃՀԶ (1727 թ.) շեաբզին:
12:

№ 292

ՖԻՐՄԱՆ

(Թուրքերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 77.6×54.8 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ—**Կազմ՝** չունի:—**Պահպանակ՝** Ֆիրմանի վերևի մասում, հետևում, կպցված է կանաչավուն մի շոր, որպես պահպանակ, ամբողջ լայնության վրա, 54.8×42.2 սմ. ծավալով:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապուն:—**Դատարկ թղթերը՝** չունի:—**Տողերը՝** ընդամենը 10 տող:—**Գծումները՝** աչքի չափով: —**Գիրը՝** արաբերեն (լեզուն՝ թուրքերեն):—**Զարդագրություն՝** Ֆիրմանի վերևի մասում կա շատ գեղեցիկ մի զարդանկար, ներքևում կիսաշրջանակաձև, իսկ վերևում բրգաձև: Բարձրությունն է 36.7 սմ., իսկ լայնքը՝ 32.5 սմ.: Ներքևի մասում միաձուլված գրված է մահմետական «Բիսմ իլլահ ռահման ռահիմ» բառերը, և «Մուհամեդ» ու 1—2 տող այլ արաբական անուններ, ոսկեգույն և կապույտ գույներով: Սրա ճիշտ կողքին, աջակողմյան մասում կա ոսկեգույն մի տերև, 10.5×5 սմ. չափերով, որ շրջանակված է սիրուն վարդագույն ծաղիկներով և կանաչ տերևներով, և որի կենտրոնի ապիտակ թողնված մասում գրված է արաբատառ թուրքերեն երեք բառեր: Սրանցից բացի, այս երկու կոմպոզիցիայից դուրս, ընդհանուր նկարում պատկերված են ոսկեգույն ծաղիկներ և ճյուղեր: Բուրգի երկու կողմերում նկարված են զարդեր, ծաղիկների նման, ոսկեգույն, կապույտ և կարմիր գույներով: Ընդհանուր սույն նկարից բացի, աջակողմյան և ձախակողմյան երկու կողմերում, նկարված են երկուական կանաչ ճյուղեր, տասնական կանաչ տերևներ և երկուական վարդագույն վարդեր (մեկը՝ կոկոն, մյուսը՝ բացված վարդ): Զափազանց գեղեցիկ վարդեր են սրանք, թուրքական մանրանկարչության հիանալի նմուշներ:—**Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ: —**Ժամանակը՝** ԺԸ դար:—**Վայրը՝** թուրքիա:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիր Ֆիրմանը ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆիրմանի հետևի մասում.)
Զուլում Աստ. չանելու Ֆարման է:
16:

№ 293

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Թղթերը՝ 23:—**Պրակները՝** երեք (Ա՝ 10, Բ՝ 12, Գ՝ 1 թերթ):—**Մեծությունը՝** 28.5×20×1.2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի երկու կողքերին ճնշումով ծաղիկներ և սրբեր են նկարված:—**Պահպանակները՝** սկզբում 4 թերթ, իսկ վերջում 2:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկկուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի մի հատ խորան (թ. 1ա), երկու հատ կիսախորան (թթ. 12ա և 15բ), մի քանի թռչուններ և ծաղիկներ, յոթ հատ լուսանցազարդ և ութ հատ գեղեցիկ թռչնագրեր: Բացի այդ ձեռագրում կան 22 հատ զանազան տեսարաններ Պատարագից, որտեղ նկարված են եկեղեցու բազմաթիվ պաշտոնյաներ: Հետագայում 1933 թ., ձեռագրի վերանորոգման ժամանակ, մատյանի սկզբում ավելացված Գք էջում նկարված է մի սիրուն զարդագիր և լուսանցազարդ, Դա Եջում՝ տավիղ նվագող մի մարդ, որի գլխին թագ կա, Դբ էջում՝ մի սկիհ և մի նշխար:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ—ԺԶ դարեր:—**Մանոթություն՝** 1965 թ. հունիսի 12-ին սույն ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատանն է նվիրվել Բուլղարիո Պլովդիվ քաղաքից Ներսես Գասապյանի կողմից: Մատյանը ս. Էջմիածին է բերված Վեհափառ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. Աբ.— ...ք արկանելոյ սպաս եկե... կամեցի քահանայն պատարագ մատուցան... պարտի այսպէս խօրհրդաբար զգեստավորիլ:

Քահանայք քո զգեցին զարդարութիւն և ...ցնծալով ցնծասցեն:

Ցիշիայ Տէր զԴավիթ և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդվավ Տեառն և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ, եթէ ոչ մտից ի յարկս տանն իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց: ...տաց քուն աչաց իմոց կամ նինջ արտեվանաց իմոց կամ հան... անց իմոց, մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ յակ...: Անայ լսաք զնմանէ Եփրաթայ և գտաք զնայ ի դաշտս մայրիոյ: Մտցուք ի յարկս նորա երկրպագցուք ի տեղւոջ ուր կացիալ են ոտքն նորա: Արի Տէր ի հանգիստ քո դու, և տապանակ կտակի սրբութեան քո: Երիցունք քո զգեցին զարդարութիւն և սուրբ քո ցնծալով ցնծասցն վասն Դաւթի սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսաք յօծելոյ քումմէ:

Երդվավ Տէր Դավթի ճշմարտութեան և ոչ ստիաց նմա, ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Եթէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Թ Բա.— ...նոցա նստցին յավիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիօն և ընտրիաց բնակել ի նման ասէ. այս է հանգիստ իմ յավիտեանս յավիտենից, ի սմայ բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սրայ օրհնելով օրհնեցից և զախքարս սորայ լցուցից հացիւ:

Երիցանց սորայ զգեցուցից զփրկութիւն և սուրբ սորայ ցնծալով ցնծասցեն:

Աղբ. ծագեցից եղջուր ի Դաւիթ պատարագ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամիաց սորայ զգեցուցից զամօթ և ի վերա նորա ծաղկեսցի սրբութիւն իմ:

Փառք Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ:

Ով սրբազան պատարագիչ յիշիայ զաղօթս քոյ հոգի զընծայիսցիս գրոյս Ռօստոմին և Դարէջանի հոգին:

Թ. Գա.—Ներսէս Գասապեան.

Պլովդիվ, 12.6.1965 թ.:

Թ. Դբ.—Ցաւելուած խորհրդատետրիս գրեցաւ ի թուին օգոստոսի 1933 տարւոյ՝ Ս. Լ. Գազանճեանէ:

Թ. 1ա.—Ես Գրիգոր քահանայ Մատթէոսի Մանդակունեոյ Զորաթաղի Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ Տփխիսի:

Կտամ յիշատակ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Նիկոփրայ, ի ձեռն եկեղեցական և աշխարհական պատգամաւոր Կաթողիկոսի ընտրութեան, ամենապատիւ Ստեփաննոս Եպիսկոպոսի Նիկոմիդոյ առ մեզ. Գասպար էֆէնտի Գ. Թ. Գասպարեանի 11-ն մայիս 1892 ամի, ի Տփխիս: Գրիգոր քահանայ Մանդակունի:

Թ. 3բ.—(Կա 14 տող հիշատակագրություն, որ թանաքը անցել է և այլևս անընթեռնելի է եղել):

Թ. 17բ.—Ցիշատակ է խոր ... ամէն: Ցիշայից ի անման պատարաքին:

Թ. 23բ.—Ցիշեա Տէր զհոգի Գևորգին և Քէյէվանի, ի հանգո այցելութիւն ի լոյս երեսաց քոց:

Թ. եա.—23 պատկեր ունի իր մեջ:

(Շարունակելի)

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ*

1. **Ագարակն բրտի գերեզման օտարաց.**
2. **Բրտի ագարակն գնեցին գերեզման օտարաց.**
3. **Գնեցին զագարակն բրտի գերեզման օտարաց:**

Այսպես է նաև՝ Ղուկ. Ժ. 9 «**Եւ բժշկեսջիք որք ի նմա հիւանդք իցեն և ասասջիք նոցա. Մերձեալ է**» վկայությունը, որը դրված է թե՛ **Բժշկեսջիք** և թե՛ **Հիւանդս** բառերի տակ.

1. **Բժշկեսջիք որքան (sic) հիւանդ իցեն.**
2. **Հիւանդս բժշկեսջիք և ասացէք նոցա մեր.**

Պարզ է, որ հեղինակն աշխատել է ճկունությամբ օժտել իր համաբարբառը՝ երբեմն դրան զոհաբերելով բնագրային ճշգրտությունը, նպատակ ունենալով ամեն գնով գտանելի դարձնել որոնված նախադասությունը: Այնու հանդերձ՝ այս երևույթի հետ պետք չէ շփոթել ձեռագրում նկատվող լեզվական այն ակնհայտնի աղավաղումները, որոնք, ինչպես դիտել տվինք արդեն, ուրիշների ձեռքով հետագայում կատարված սրբագրության և ընդօրինակումների հետևանք են:

Սրանից հետո հանդես է գալիս Բաղդասար Կ. Պոլսեցու համաբարբառը, որով սկսվում է հայ տպագիր համաբարբառների շրջանը:

1753 թվականին Կ. Պոլսում լույս տեսավ բանասեր-քերականագետ Բաղդասար դպիր Կ. Պոլսեցու կազմած նորկտակարանային համաբարբառը՝ «Ցանկ գիրք Նոր Կտակարանին»[53]:

Բաղդասար դպիրն իր ժամանակի հայտնի գիտնականներից էր ոչ միայն որպես հեղինակ երկհատոր Քերականության, որը երեք տպագրության է արժանացել նույն ԺԸ դարի ընթացքում, և ուրիշ երկերի, այլև որպես բնագրաբան՝ միջնադարյան մատենագրական բնագրերի հրատարակությամբ (Մաշտոց և Հաճախապատում, Կյուրեղ Աղեքսանդրացու, Դավիթ Անհաղթի, Զենոբ Գլակի, Գրիգոր Տաթևացու և Սարգիս Շնորհալու գործերը):

Ի տարբերություն Անանիա Ալլահվերդյանի Համաբարբառի, որը միայն չորս Ավետարաններն էր ընդգրկում, Բաղդասար դպրի Համաբարբառն ընդգրկում էր Նոր Կտակարանի բոլոր գրքերը: Դարձյալ՝ ի տարբերություն նախորդի, համաբարբառային սույն բառարանը լայն ծավալով չի բերում բնագրական վկայությունները, այլ միայն բառի հետ եղած շատ փոքրիկ կապակցություններով, բայց ունի խիստ այբբենական դասավորում. Օրինակ՝

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. ԺԱ—ԺԲ համարներից:

[53] Տե՛ս «Գրքոյկ որ կոչի Ցանկ գիրք Նոր Կտակարանին: Որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երևելիս, եդեալ ըստ այբբենական կարգին հանդերձ համարաթուով գլխոցն և համարացն տընտամանց: Առ ի դիւրապէս գտանել զոր ինչ և խնդրիցէ ոք բանս ի սուրբ Նոր Կտակարանին», Կ. Պոլիս, 1753: Տպագրության հիշատակարանում ասվում է. «Եւ արդ՝ եղև կատարումն տպեցման սորին ի թվիս Հայոց՝ ՌՄԲ (=1753)... ի Կոստանդնուպօլիս քաղաքի...»:

Ազգաց եւ լեզուաց	Յայտ. ԺԳ. 7
Ազգաւ անմտաւ	Հռոմ. Ժ. 19
Ազգն քո եւ քահա	Յովհ. ԺԸ. 35
Ազգս ազգս եթէ	Հռոմ. ԺԲ. 6

Բերված օրինակները ցույց են տալիս, որ այս համաբարբառում ևս բառերը շարք են մտնում իրենց ունեցած քերականական թեքումներով։ Այս կերպով բառաշարում համապատասխան տառերի շարքերում տեղավորված են նաև, օրինակ, դերանունների հոլովված ձևերը՝ **«Իմ եթէ չէր եկեալ»** (Հովհ. ԺԵ. 22), **«Ինեւ քարոզութիւնն»** (Բ Տիմ. Դ. 17), **«Ինձ որ տրուպս եմ»** (Եփ. Գ. 8), **«Նա է տեղեկացեալ»** (Կոր. Ը. 3), **«Նմա պարտ է աճել»** (Յովհ. Գ. 30), **«Նովաւ հաշտեցու»** (Կող. Ա. 20), **«Նոքա յաշխարհի են»** (Յովհ. ԺԷ. 11), **«Նոցա զազատութիւն խոս»** (Բ Պետ. Բ. 19), **«Նոքօք կատարիւր»** (Յայտ. ԺԵ. 1), և այլն։

Այս նույն ձևով, օրինակ, գտնում ենք նաև էական բայի խոնարհված ձևերը՝ **Եղեալ, Եղեաք, Եղելոյ, Եղեն, Եղեր, Եղերուք, Եղեւ, Եղէ, Եղէց, Եղէք, Եղիջիք, Եղիցի, Եղիցին, Եղիցուք, Եմք, Են, Էաք, Էիք, Էր, Էք, Լեալ, Լեր, Լերուք, Լինիլ, Լինին, Լինիջիք, Լինիցի, Լինիցիմ, Լինիցիք, Լիցուք**։ Հասկանալի է, որ բայական այս բոլոր բառերն իրենց հետ միշտ ունեն փոքրիկ կապակցություններ, ինչպես՝ **«Եղեալ վասն մեր ան»**, **«Եղեաք հեգք ի մի»**. և կամ՝ **«Եղեւ ամենայն հնազանդ»**, **«Եղեւ ամենայն օրինացն»**, **«Եղեւ բան Տեառն ի վերայ»** և այլն։

Այբբենական շարքում տեղ են գտել ոչ միայն ինքնուրույն բառերը, ինչպես են, օրինակ, գոյական և ածական անունները, այլև պարագայական հանգամանքներ արտահայտող նախդիրները, նախադրությունները, մակբայները, շաղկապները։ Այսպես՝ **«Զերեսս երկնի կա»** (Մատ. ԺԶ. 3), **«Զերիս աւուրս եւ»** (Յայտ. ԺԱ. 9), **«Ի մեռելոցն յառնել»** (Մարկ. Թ. 9), **«Ի մեր վարդապետութիւն գր»** (Հռոմ. ԺԵ. 4), **«Յայնմ աւուր խնդ»** (Յովհ. ԺԶ. 26), **«Առ ի բառնալոյ զմե»** (Եբր. Թ. 28), **«Ընդ անիծիւք են»** (Գաղ. Գ. 10), **«Ըստ միտս կատարել»** (Եբր. Թ. 9), **«Յորքան ժամանակս»** (Հռոմ. ԺԱ. 13), **«Վասն բազմանալոյ ան»** (Մատ. ԻԴ. 12), **«Զկնի երթան գա»** (Յայտ. ԺԴ. 4), **«Իբրև զգորտս քան»** (Յայտ. ԺԶ. 13), **«Իբրեւ լուան որք»** (Գործք Ը. 14), **«Եւ զի էք դուք որ»** (Գաղ. Դ. 6), **«Այլ և մեք իսկ որք»** (Հռոմ. Ը. 23), **«Եթէ իցէ ելեալ ըստ»** (Կոր. Է. 36), **«Զի եթէ որ ի ձեռն»** (Եբր. Բ. 2), **«Թէ ե՞րբ դառնայց»** (Ղուկ. ԺԲ. 36), **«Իսկ որ բերէ զփուշ»** (Եբր. Զ. 8), **«Ապա թէ ոչ եւ դու»** (Հռոմ. ԺԱ. 22), **«Այսինքն է զիմ ա»** (Փիլիմ. Ա. 12), և այլն։

Բաղդասար Կ. Պոլսեցու Համաբարբառը պարունակում է 10.512 բառվկայություն։ Նրա ծավալն սկզբնապես ավելի է եղել, բայց հեղինակը, հաշվի առնելով տպագրության դժվարությունները, դուրս է թողել մի շարք վկայություններ, որոնք, ինչպես ինքն է ասում, կարող էին գտնվել նաև տպագրությամբ հայտնի ուրիշ երկերի միջոցով։ Նա գրում է.

«Գիտելի է և այս և յոյժ ի միտ պահելի, զի վասն յոյժ հոգ տանելոյս մերոյ համառոտութեան գրքուկիս, յետ հաւաքմանս մերոյ զհաւաքելիսն ըստ մեր մտացս և դնելոյ ի կարգին, եդաք առաջի մեր զբառգիրքն Աբբային և զհին ցանկն մատենական Աստուածաշնչոյն, և զոր ինչ գտաք ի նոսին ի մեր հաւաքելոցս, հանաք զայնս ի բաց, աւելորդ համարելով զգտեալսն ի նոսին՝ դնել և յաստում, որպէս ասէ Արիստոտէլ՝ թէ աւելորդ է երկոքումբ առնել զայն, որ կարէ լինիլ միով» (էջ 174—175)։

Այստեղ հիշատակված երկերից առաջինը Մխիթար Սեբաստացու բառարանի առաջին հատորն էր, տպագրված 1749 թվականին[54], իսկ երկրորդը՝ 1733 թվականին նրա հրատարակած Աստվածաշնչի[55] վերջում գտնվող «Ցանկ մատենական»-ն էր, բառացանկ, որն արտատպված էր Աստվածաշնչի 1666 թվականի Ոսկանյան հրատարակությունից և որի էությունն արդեն տեսանք վերևում՝ Ոսկան Երևանցու մասին խոսելիս: Այս երկու հրատարակություններում թեև բնագրական վկայություններ չէին բերված, բայց բառերի դիմաց նշանակված էին Աստվածաշնչի գրքերի համապատասխան գլուխներն ու տնահամարները:

Բաղդասար Կ. Պոլսեցին իր Համաբարբառը կազմելու համար որպես բնագիր օգտագործել է Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշունչը, որը հիմնականում Ոսկան Երևանցու անխնա սրբագրություններով աղճատված բնագրի վերարտադրությունն էր. բայց նաև երբեմն հարկադրված է եղել հայկական հին՝ հարազատ բնագրից ևս առնել որոշ տողեր՝ երբ դրանցից շատ է տարբերվելիս եղել ոսկանյան նոր բնագիրը, որպեսզի ընթերցողը չզրկվի դրանք ևս գտնելու հնարավորությունից: Բաղդասար դպիրն այդ մասին գրում է.

«Եւ հին վարդապետքն մեր՝ որ ըստ հնոյն եդեալ են ի գրուածոցն իւրեանց, ընթերցողքն զնոսա՝ այնպէս պահեալ են ի մտի. և որոնեալ զայն ի ցանկիս, ոչ գտանեն զնոյն ձև, զի այս ըստ նորոյս է հաւաքուած. թէպէտ և զոմանս եդաք և այնպէս՝ առ ի գտանիլ» (էջ 173—174):

Նշանակում է՝ գիտնական հեղինակն իր աշխատանքի ընթացքում Ոսկանյան տպագրված նոր բնագիրը համեմատել է հայկական անտիպ հին բնագրի հետ և պատրաստել ըստ ամենայնի գիտականորեն հօրինված մի համաբարբառ՝ ի պետս ուսումնասիրողների. և այդպես էլ ինքն ասում է, որ այս գիրքը «ամենայն կարդացողի ոչ է պիտոյ, այլ միայն գրոց աշակերտաց և բանասէր անձանց, որ սէր ունին գրոց գիտութեան» (էջ 175):

ԺԹ դարի առաջին կեսում մեզ մոտ հայտնվել են սուրբգրական մի քանի այլ համաբարբառներ, որոնք մնացել են անտիպ:

Նրանցից մեկը ժամանակին պատկանում էր Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանին (Ղալաթիա թաղամասում) և հայտնի էր որպես № 2 ձեռագիր. այդ առումով մենք նրան տալիս ենք «№ 2 համաբարբառ» պայմանական անունը: Այդ ձեռագիրն այժմ գտնվում է նույն քաղաքի Պերա թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցում:

Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանը, որ ժամանակին կազմել էր Ազգ. Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, նկարագրել է նաև այս ձեռագիրը[56]:

Տրված նկարագրության համաձայն՝ «№ 2 համաբարբառ»-ն ընդգրկում է Հին և Նոր Կտակարանները և ամփոփված է երկու ստվար հատորների

---

[54] «Բառգիրք հայկազեան լեզուի, բաժանեալ յերկուս հատորս, յորոց յառաջնումն՝ որ է տպագրեալս այս, պարունակեալ գոն յոգնախուռն բազմութիւնք բառից Աստուածաշունչ Գրոց և այլոց երևելի մատենից լեզուագէտ դպրապետաց...: Արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց», Վենետիկ, 1749:

[55] «Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց: ...Վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ աշխատասիրութեամբ և ջանիւք տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ՝ Աբբայ Հայր կոչեցելոյ», Վենետիկ, 1733:

[56] Բաբգեն աթոռակից կաթողիկոս (Կյուլեսերյան), «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանին Հայոց», Անթիլիաս, 1961, էջ 9—12:

մեջ, որոնք խորագիր և անվանաթերթ չունեն: Նրա հեղինակն անհայտ է: Գրված է բամբակյա փայլուն թղթի վրա, մանրագույն նոտրագրով: Թղթի չափն է՝ 39×26 սմ, իսկ գրվածքի չափը՝ 23×19 սմ: Բաղկացած է 46 պրակներից՝ յուրաքանչյուրը 12 թերթ կամ 24 էջ, ընդամենը՝ 552 թերթ կամ 1.104 էջ. էջերը բաժանված են 3-ական սյունակների, ուստի՝ ամբողջ գործը կազմված է 3.312 սյունակներից: Դժբախտաբար նշանակված չէ տողերի քանակը, հետևաբար նաև հնարավոր չէ գոնե մոտավոր հաշվով իմանալ, թե քանի՝ բառ կամ վկայություն է պարունակում այս համաբարբառը:

Սահմանափակ են մեր տեղեկությունները «№ 2 համաբարբառ»-ի ինքնության մասին: Դատելով տրված նմուշներից՝ երևում է, որ այս համաբարբառը ևս ունի այբբենական հորինվածք, բայց բառաշարի մեջ մտնող բառերի դասավորման համար այստեղ կիրառված է բառերի համախմբման մի նոր դրություն: Եթե, ասենք, Բաղդասար Կ. Պոլսեցու Համաբարբառում **Անձն** բառով բերվող վկայությունները բաշխված էին զանազան տեղերի վրա, օրինակ՝ **զ** նախդրով եղածները տեղավորված էին **Զ** տառի շարքում («Զանձինս ճարակեն», «Զանձն ունայնացոյց»), յ նախդրով եղածները՝ **Յ** տառի շարքում («Յանձինս իւրեանց», «Յանձն առնեմ ձեզ»), առանց նախդրի եղածներն՝ ուղղակի **Ա** տառի տակ («Անձամբ զանձինս», «Անձանց իւրեանց») և այլն, ապա «№ 2 համաբարբառ»-ն այդ բոլորը համախմբում է մի տեղ՝ ուղղակի **Անձն** բառի տակ, դասավորման համար նշանակություն չտալով նախդիրներին: Այդ են ցույց տալիս նկարագրողի հաղորդած հետևյալ նմուշները.

զ-Անձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց	Յովհ. ԺԵ. 13
զ-Անձն իւր դնէ ի վերայ ոչխարաց	Յովհ. Ժ. 11
յ-Անձն իւր, եթէ տրտնջեն վասն այնորիկ	Յովհ. Զ. 62
զ-Անձն իւր, և բարձցէ զխաչ իւր	Մարկ. Ը. 34
յ-Անձն իւր. և վաղվաղակի փառաւորեսցէ	Յովհ. ԺԳ. 32
յ-Անձն իւր զզօրութիւն, որ ելն ի նմանէ	Մարկ. Ե. 30
զ-Անձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա	Մատթ. ԺԶ. 25

Ուրիշ որևէ տեղեկություն չունենք այս համաբարբառի յուրահատկությունների մասին: Իսկ ինչ վերաբերում է նրա ներկայացրած վիճակին՝ այդ մասին նկարագրողն ասում է. «Կարծես առաջին գրչէ ելած գործ մըն է որ բառերը լաւ չեն դասաւորուած այբուբենական կարգով. թէ՛ ետևառաջութիւններ կան և թէ՛ վերջէն յաւելուածներ ու սրբագրութիւններ, նոյնիսկ թերուածներ»:

Ուրիշ տեղեկությունների համաձայն՝ Կ. Պոլսի Հայոց Ազգ. Մատենադարանում մի ժամանակ կար նույնպես անանուն մի համաբարբառ, որը կոչվում էր «Բուրաստան խնկոց»: Կյուլեսերյանի կազմած ցուցակում այդ անունը չի երևում, բայց մեզ թվում է, որ «№ 2 համաբարբառ»-ը և «Բուրաստան խնկոց»-ը կարող են լինել նույն ձեռագիրը: Այդպիսի հավանականության համար հիմք է տալիս ոչ միայն այն հանգամանքը, թե երկու ձեռագրերի տեղն էլ Ազգ. Մատենադարանն է, այլև այն, որ նրանց մասին տրված նկարագրությունների միջև կան ակնբախ նմանություններ:

«Բուրաստան խնկոց»-ի մասին հետևյալ տեղեկություններն է տվել Թոներածական հոդվածում, 1895 թվականին Երուսաղեմում տպագրված հայրապետ քհ. Տեր-Իսահակյանն իր «Տեսութիւն ի վերայ համաբարբառի Ս. Գրոց» բարբառի սկզբին.

«Յընթացս տպագրութեան մատենիս յանօթս շնորհեցաւ մեզ յԱզգային Մատենադարանէ Կ. Պոլսի ստուար երկհատոր ձեռագիր ցանկ ամենայն բառից Ս. Գրոց: Գիր գրչագրիս է նօտր կոչեցեալն, յոյժ մանր, այլ յստակ և գեղեցիկ, գրեալ ի վերայ հաստ և կարծր բամբակեայ թղթոյ: Չիք ինչ ուրեք ի նմին յառաջաբան կամ վերջաբան կամ յիշատակարան. և ոչ իսկ անուն գրուածոյն կամ հեղինակին գտանի ի ճակատի կամ այլ ուր ի գիրս, այլ միայն ի յետ կոյս կազմի իւրաքանչիւր հատորոյ ոսկեգրով դրոշմեալ է **Բուրաստան խնկոց:** Ի մասին ոճոյ և դասաւորութեան՝ տարբեր ոչ սակաւ ի ներկայ գրուածոյս: Ցայտնի տեսանի ի նմա աշխատութիւն եօթն կամ ութ անձանց» և այլն[57]:

«№ 2 համաբարբառ»-ի և «Բուրաստան խնկոց»-ի մասին տրված նկարագրությունների միջև եղող նմանություններն, ինչպես ասվեց, ակներև են և, ամենայն հավանականությամբ, դրանք միևնույն ձեռագիրն են ներկայացնում: Մեզ համար այս մասին տարակուսանք պատճառող միակ կետն այն է, թե Կյուլեսերյանը «№ 2 համաբարբառ» ձեռագրի նկարագրության մեջ ի՞նչպես կարող էր չնշել, եթե նրա երկու հատորների կազմի թիկունքին ոսկեգրով դրոշմված լինեին «Բուրաստան խնկոց» բառերը:

«Բուրաստան խնկոց»-ի նկարագրության մեջ ասվում է, որ, ձեռագրից դատելով, այնտեղ 7 կամ 8 տարբեր անձերի աշխատանք կա: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ «Բուրաստան խնկոց»-ը խմբական աշխատանքի արդյունք է: Մենք արդեն տեսանք, որ ժամանակին կարդ. Հուգոնն իր համաբարբառը կազմելիս գործի է լծել 500 և ավելի վանականների: Երևում է, որ «Բուրաստան խնկոց»-ը ևս վանական միջավայրում է ծնունդ առել. իսկ թե ո՞վ է եղել նրա նախաձեռնողը՝ հայտնի չէ:

Տեր-Իսահակյանը բավականին համոզիչ փաստարկումով առաջ է քաշել այն կարծիքը, թե «Բուրաստան խնկոց»-ի հեղինակը պետք է եղած լինի Դիոնեսիոս վ. Կարապետյանը[58], որը Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի միաբան էր, այնտեղ վարել էր ավագ թարգմանի և քարտուղարի պաշտոններ, իսկ 1824 թվականին կարգաթող էր եղել և ընդունել բողոքականություն[59]: Այդ կարծիքին է նաև Մկրտիչ եպս. Աղավնունին[60]: Եթե այդ կարծիքը հաստատ համարվի, ապա դա մեզ հիմք կտա ասելու, որ «Բուրաստան խնկոց»-ը կազմվել է Ս. Հակոբի վանքում՝ Դիոնեսիոս վ. Կարապետյանի նախաձեռնությամբ և մի խումբ միաբանների կամ ուսանողների գործակցությամբ, նախքան 1824 թվականը:

Այս ժամանակաշրջանից հիշատակվում է նաև Հին և Նոր Կտակարանների մի ուրիշ համաբարբառ, հեղինակություն Հովսեփ վ. Տեր-Ավագյանի: Դրա մասին, սակայն, ավելի է նպատակահարմար խոսել 1848 թվականին Զմյուռնիայում տպագրված անանուն համաբարբառից հետո, որովհետև կարծիք կա, որ դա կարող է աղբյուր ծառայած լինել վերջինիս:

Զմյուռնիայի համաբարբառը, որը միայն Նոր Կտակարանն է ընդգրկում,

---

[57] Տե՛ս «Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ, ի Միաբանութենէ Սրբոց Յակոբեանց», Երուսաղեմ, 1895, էջ Ե:

[58] Անդ, էջ Ե:

[59] Մկ. եպս. Աղավնունի, «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 116:

[60] Մկ. եպս. Աղավնունի, «Սուրբ Գրոց ուսումը և անոր սաղիմանայ աշխատաւորները», **Հայ Խօսնակ.** Բ տարի, 1924/25, էջ 125:

լույս է տեսել այնտեղ հաստատված ամերիկյան միսիոնարների տպարանից և կրում է «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի» խորագիրը[61]:

Զմյուռնիայի համաբարբառը ևս բառարանային եղանակով է կառուցված, բայց, ի տարբերություն հայկական նախորդ համաբարբառների, այստեղ վկայությունները բերված են տվյալ բառին թե՛ նախորդող, թե՛ հաջորդող կապակցություններով: Այսպես, օրինակ, **Մերձենալ** բառի տակ այստեղ Մարկ. Բ. 4 տնից բերված է **«Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա»** ամբողջական վկայությունը, որը նախորդների սկզբունքով այլ կերպ չէր լինի, բայց եթե սկսելով միայն **մերձենալ** բառից՝ **«Մերձենալ առ նա՝ յամբոխէ անտի»:** Այս **Մերձենալ** բառի տակ էլ ամփոփված են այն բոլոր վկայությունները, որոնք պարունակում են այդ բառը և նրա թեքված ձևերը (մերձենամ, մերձեցաւ, մերձեցան, մերձեցայք, մերձեսցին, մի՛ մերձենար, մի՛ մերձենայք և այլն): Այս դրությամբ են բերված նաև գոյականներն ու ածականները: Սակայն, եթե հոլովման կամ խոնարհման ընթացքում բառի արմատը կամ հիմքը կերպարանափոխվում է և կամ փոխարինվում է մի ուրիշով, այդ դեպքում նոր ձևը, որպես ինքնուրույն բառ, իր սեփական տեղն է ունենում բառաշարում: Այս ձևով համաբարբառում որպես ուրույն բառեր են տեղ գրավել՝ **Օր**-ը (զօր, զօրս, յօր, յօրէ, ցօր) և **Աւուր**-ը (աւուրք, աւուրց, աւուրբ, յաւուր, յաւուրս, յաւուրց, զաւուրս, զաւուրբք), **ճանաչել**-ը (ճանաչեմ, ճանաչէ, ճանաչէք, ոչ ճանաչէք, առ ի չճանաչելոյ) և **ծան(եալ)**-ն (ծանեաւ, ծանեան, ծանիցես, ծանիջիք, ծանուցեալ, ոչ ծանեար, ոչ ծանիցի). Նմանապես՝ **Ուտել**-ը (ուտեն, ուտէր, ուտիջիք, ուտիցէք, ուտելոյ, չուտեմք, ոչ ուտեն, ոչ ուտիցէ), **Կեր**-ը (կերան, կերայց, կերիցես, կերիցէ, կերիցուք, կերայք) և **Եկեր**-ը («Եկն թռչունն երկնից եւ եկեր զնա», և այլն): Դերբայական ձևերն ընդհանրապես գնում են, ըստ վերևում նշվածի, բայական բառերի տակ, բայց երբեմն նաև ինքնուրույն են հանդես գալիս բառաշարում, ինչպես, օրինակ, **Գալոց, Եկեալ, Ասացեալ, Կերող** և այլն:

Այս համաբարբառում տեղ չի տրվել ինչպես նախդիրներին ու նախադրություններին, այնպես էլ դերանուններին, մակբայներին, շաղկապներին և գոյականների, ածականների ու բայերի շարքին պատկանող շատ բառերի:

Զմյուռնիայի համաբարբառի համար օգտագործված է Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակությունը՝ դասական թարգմանության բնագիրը: Այսպես՝ Գործք Ժ. 33 **«Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ... առաջի Աստուծոյ կամք»** վկայությունն ըստ Զոհրապյանի է տրված՝ **Յղել** և **Կալ** բառերի տակ, մաս առ մաս, և ոչ թե ըստ Ոսկանի, որը դրա փոխարեն ունի՝ **«Վաղվաղակի ուրեմն առաքեցի առ քեզ... առաջի քո կամք»:** Սակայն երբեմն, Զոհրապյանի հրատարակության մեջ ցույց տրված տարընթերցումների հետևողությամբ, Ոսկանյան բնագրից ևս բերված են վկայություններ, որոնք անծանոթ են հայկական բնագրին: Այդպիսիներից է, օրինակ, Գործք ԻԸ. 29 **«Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին ի նմանէ Հրէայքն, որք ունէին ի մէջ ինքեանց զբազում խնդիրս»** վկայությունը, որը մաս առ մաս տրված է **Արտաքս, Հրէայ, Ունել** և **Խնդիր** բառերի տակ:

Զմյուռնիայի համաբարբառի հեղինակն անհայտ է: Թորոս քհ. Տեր-Իսահակյանի կարծիքով՝ այս համաբարբառը պետք է քաղված և հանված

---

[61] «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի, այբբենական կարգաւ շարադասեալ», Զմյուռնիա, տպ. Գուլ. Գրիֆֆիտի, 1848:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՅԱՆԿ ՆՄԱՆԱՁԱՅՆ ՐԱՌԻՑ

ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՒ ՀԱՐԱԴԱՍԵԱԼ

«Բնութեան գիրք», Գլ. Ե. 39։

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿԱԹՂԻԿԷՍՍԱՅ ԿՐԻՖԵՏԻՔ

1848

Թադեոս վ. Աստվածատուրյանի համաբարբառի անվանաթերթը

լինի «Բուրաստան խնկոց»-ից, ուստի և նրա հեղինակությունը վերագրելի է Դիոնեսիոս վ. Կարապետյանին. սակայն, անառարկելի չհամարելով իր այս կարծիքը, նա ավելացրել է. «Ցանկալի է մեզ ստուգագոյնս տեղեկենալ զայսմանէ ի հաստատութիւն կամ յուղղութիւն կարծեաց մերոց»[62]: Մեր կարծիքով՝ եթե հնարավոր լիներ հաստատել «Բուրաստան խնկոց»-ի և «№ 2 համաբարբառ»-ի նույն լինելը, ապա պարզված կլիներ նաև այս հարցը, որովհետև «№ 2 համաբարբառ»-ը, ինչպես տեսանք նրա նկարագրության մեջ, կառուցվածքով ակնհայտորեն տարբեր է Զմյուռնիայի համաբարբառից:

Զմյուռնիայի համաբարբառի հեղինակության հարցը կապվում է նաև Հովսեփ վ. Տեր-Ավագյանի անվան հետ, ինչպես ակնարկեցինք արդեն:

Զմյուռնիայի տպագիր համաբարբառի օրինակներից մեկը, որն այժմ գտնվում է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանում (Ա. Ալպոյաճյանի ֆոնդ № 105), անվանաթերթից առաջ կրում է հետևյալ ձեռագիր հիշատակագրությունը՝ առանց ստորագրության.

«Ցանկ բոլոր Հին և Նոր Կտակարանաց արարեալ է ի հայր Յովսէփայ գիտնական վարդապետէ Տէր Աւագեան, որ գտանի վասն տպագրութեան ի Պատրիարգարանին Կոստանդնուպոլսոյ, եղելոյ ի Մայր Եկեղեցւոջ տեղւոյն, կառուցելոյ յանուն Սրբոյ Աստուածածնի. այլ որպէս թուի ինձ, թողեալ զցանկ Հնոյ Կտակարանի, զայս ցանկ Նորոյ միայն տպեալ են՝ առանց յառաջաբանութեան և յիշելոյ զ'ի լոյս ընծայողն սորին, որ էր և է օրհնեալ ի յաւիտեանս, ամէն»:

Թե ո՞ւմ ձեռքից է այս հիշատակագրությունը և թե ո՞րքան է հավաստի այս կարծիքը, ըստ որի Զմյուռնիայի համաբարբառը պիտի հանված լինի Տեր-Ավագյանի համաբարբառից, չենք կարող ասել: Բայց այստեղ նույնքան և ավելի կարևորն այն է, որ Հովսեփ վ. Տեր-Ավագյանի հեղինակությամբ հրատարակված մի համաբարբառ տպագրության էր սպասում Կ. Պոլսի Ազգային Պատրիարքարանում՝ դեռ նախքան Զմյուռնիայի համաբարբառի հրատարակումը:

Արցախեցի Հովսեփ վ. Տեր-Ավագյանը հայտնի մանկավարժ և գիտնական էր, որը «ճոխացոյց զաշխարհն Արցախու քերթողական, հռետորական, փիլիսոփայական և աստուածաբանական ուսմամբ»[63] և գնահատվել է որպես «առաջին աղբիւր լուսաւորութեան Արցախական նահանգի ի վերջին ժամանակս»[64]: Մահացել է 1847 թվականին[65]: Հեղինակ է քերականական և մի շարք այլ երկերի, որոնք մեծ մասամբ մնում են անտիպ[66]:

[62] Թ. քհ. Տեր-Իսահակյանի հիշյալ հոդվածը, էջ Ե:

[63] Սարգիս վ. Ջալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Թիֆլիս, 1842, էջ 193:

[64] Անդ, մասն Բ, Թիֆլիս, 1858, էջ 355:

[65] Մակար վ. Բարխուտարյանց, «Արցախ», Բաքու, 1895, էջ 179:

[66] Հովսեփ վ. Տեր-Ավագյանի անտիպ երկերից մեզ հայտնի են հետևյալ ձեռագրերը՝ Երևանի Պետ. Մատենադարանում.

ա. «Քերականութիւն հայկազեան լեզուի», ձեռ. № 3620:

բ. «Տետրակ բայի» և «Տոմար», ձեռ. № 2563:

գ. «Գիրք տեսական փիլիսոփայութեան», ձեռ. №№ 2525, 2828, 2835, 2990, 3619, 4038, 4045, 6556, 6818, 8750:

դ. «Ներածութիւն աստուածաբանութեան», ձեռ. № 4045:

ե. «Վեհան ուղղափառաց», ձեռ. № 2622:

Հպագրված գործ է՝

զ. «Առաջին մասն Փիլիսոփայութեան որ ասի՝ Տրամաբանութիւն, համառօտեալ ի բուն Տրամաբանութենէ աստուածաբան վարդապետին Կոլոնոյ ի 1830 ամի», Շուշի, 1840: Հմմտ. Հ. Մ. Անասյան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Ա, էջ 967:

Հովսեփ վ. Տեր-Ավագյան Արցախեցու հորինած համաբարբառն այժմ չկա Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի դիվանատանը[67]: Եթե այդ ձեռագիրն իրոք անցել էր Զմյուռնիայի ամերիկյան միսիոնարների ձեռքը, այդ դեպքում հարկ կլինի նրա՛նց դիվանում որոնել անհրաժեշտ լուսաբանությունները:

Զմյուռնիայի համաբարբառից հետո, 1860-ական թվականների սկզբին, Երուսաղեմի միաբաններից Թադեոս վ. Աստվածատուրյանը[68] ձեռնամուխ է լինում Հին և Նոր Կտակարաններն ընդգրկող ծրագրով կազմելու մի նոր համաբարբառ, որը յոթնամյա տքնաջան աշխատանքով ավարտվում է 1867 թվականին, բայց 1895 թվականին է միայն, որ կարողանում է լույս աշխարհ գալ Երուսաղեմի տպարանից[69]:

Այս համաբարբառը ոչ միայն ընդգրկումով, այլև մակարդակով ավելի բարձր էր քան Զմյուռնիայինը:

Համաբարբառի հրատարակման հետ կապված գիտական աշխատանքները վստահված էին Թորոս քհ. Տեր-Իսահակյանին, որի անունն առիթ ունեցանք հիշատակելու վերևում: Հատորի սկզբին զետեղված էր նրա ներածական հոդվածը՝ «Տեսութիւն ի վերայ համաբարբառի Ս. Գրոց»[70]. իսկ ավելի առաջ, 1891 թվականին, նա խմբագրել էր Երուսաղեմի տպարանի անունից մամուլին տրված այն Հայտարարությունը, որով ուսումնասեր հասարակայնությանը կոչ էր արվում օժանդակելու Համաբարբառի հրատարակմանը[71]:

Տեր-Իսահակյանի գնահատմամբ՝ այս Համաբարբառը խթան էր հանդիսանալու ոչ միայն սուրբգրական ուսումնասիրությունների զարգացմանը, այլև հայագիտական հետազոտությունների: Մամուլի Հայտարարության մեջ նա ասում էր, որ «հայկական Աստուածաշնչի Համաբարբառն անչափ և անկշռելի օգուտ կրնայ ընծայել ամեն հայագէտի»[72]. իսկ «Տեսութիւն» ներածական հոդվածում, ավելի մանրամասնելով իր այդ կարծիքը, նշում էր, որ Համաբարբառը հայագիտությանը մատուցելու է կրկնակ ծառայություններ՝ աղբյուրագիտական և լեզվաբանական:

Համաբարբառի հայագիտական ծառայությունը նախ լինելու էր այն, որ հնարավորություն էր տալու՝ բացահայտելու մեր միջնադարյան մատենագրության պատմական ու գրական կապերը և գաղափարական առնչությունները Աստվածաշունչ մատյանի հետ: «Զիք ինչ տարակոյս,—գրում էր նա,—զի ուսումնասէրք մատենագրութեանց նախնեաց և եկեղեցական մատենից մեծապէս օգտեսցին Համաբարբառաւս ի ստուգութիւն աստուածեղէն բանիցն ի մէջ բերելոց թէ ուստի՛ և յի՛նչ միտս առեալ»[73]: Սա՝ Համաբարբառի նշա-

---

[67] Շնորհակալությամբ նշում ենք, որ ընդառաջելով մեր խնդրանքին, Ազգ. պատրիարքարանի դիվանատան պաշտոնյաներից պր. Գ. Բամպուքճյանը որոնումներ կատարեց այդ ուղղությամբ, բայց՝ ապարդյուն:

[68] Թադեոս վ. Աստվածատուրյանը ծնվել է 1831 թ. և մահացել 1906 թ., տես Մկ. եպս. Աղավնունի, «Միաբանք և այցելուք...», էջ 149:

[69] «Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ, ի Միաբանութենէ Սրբոց Յակոբեանց», Երուսաղեմ, 1895:

[70] Տես անդ, էջ Գ—Թ:

[71] Այս Հայտարարության համառոտությունը տես Բազմավէպ, 1891, էջ 282—283:

[72] Անդ, էջ 282:

[73] Թ. քհ. Տեր-Իսահակյան, «Տեսութիւն», էջ Ը:

նակության աղբյուրագիտական-բնագրագիտական կողմն էր, որն, իրոք, այսօր էլ կարևոր տեղ է գրավում հայագիտության պատմա-բանասիրական հետազոտությունների բնագավառում:

Իսկ Համաբարբառի լեզվաբանական-քերականական նշանակության մասին Տեր-Իսահակյանը գրում էր. «Զիր ինչ տարակոյս զի որք զհայ լեզուս հմտութեամբ և կատարելութեամբ ուսանել բաղձան, պարտին և զՀայկական Աստուածաշունչն գէթ իբրև ինագոյն և ընտիր մատենագիր՝ ուշի ուշով քննել և ուսումնասիրել, զհարազատութիւն ոնոյ և դարձուածոց լեզուիս ի նմանէ ստուգել և այնու հաստատել», ուստի և «պիտանի և սատարիչ վարկանելի է այնոցիկ որ զԳիրն ուսանիցին յաղագս յատակութեան և հարազատութեան լեզուին», այսինքն՝ «նշանակութիւնք բառից և կիրառութիւն նոցին նովիմբք իսկ բաղդատութեան օրինօքն հաստատեալ ճշդին» և «այսու ձեռնտուութեամբ քերականական համաձայնութիւնք որոշին, այլ և այլ կիրառութիւն յատուկ անուանց և օտար բառից և օրէնք տառադարձութեան նոցին սահմանին»[74]: Այլ խոսքով՝ դասական հայերենի օրինաչափությունների ուսումնասիրման ուղիներից մեկն էր ցույց տրվում այստեղ:

Հայերեն սուրբգրական համաբարբառների պատմության մեջ առաջին անգամն էր, որ ուշադրություն էր հրավիրվում այն օգուտների վրա, որ Աստվածաշնչի համաբարբառը ներկայացնում էր հայագիտության համար:

Այս համաբարբառը հօրինվածքով նման է Զմյուռնիայի համաբարբառին: Վերջինիս մասին խոսելիս՝ բառերի դասավորման համար նրա կիրառած հիմնական սկզբունքներից մեկը մենք պարզաբանեցինք **Մերձենալ** բառի օրինակով: Այժմ այստեղ փոխանակ ասելու, որ «այս **Մերձենալ** բառի տակ էլ ամփոփված են այն բոլոր վկայությունները, որոնք պարունակում են այդ բառը կամ նրա թեքված ձևերը» (տես վերևում), մենք ուղղակի կբերենք **Մերձենալ** բառի տակ ամփոփված 239 վկայություններից մի քանի նմուշներ:

ՄԵՐՁԵՆԱԼ

Ծնն.	ԺԲ.	11.	**Մերձեցաւ Աբրամ մտանել յԵգիպտոս.**
	Ի.	4.	**Աբիմելէք ոչ Մերձեցաւ ի նա.**
	Ի.	6.	**Ոչ ետու... Մերձենալ ի դա.**
	ԻԷ.	41.	**Մերձեսցին աւուրք կարեաց.**
	ԼԵ.	16.	**Մերձեցաւ ի Քաբրաթա երկիր.**
Ելք.	Գ.	4.	**Եթէ Մերձենայ տեսանել.**
	Գ.	5.	**Մի՛ Մերձենար այսր.**
	ԺԲ.	48.	**Ապա թէ Մերձենայցէ առ ձեզ.**
	ԺԲ.	49.	**Որ գայցէ Մերձենալ ի ձեզ.**
	ԺԹ.	12.	**Ամենայն որ Մերձեսցի ի լեառնն.**
	ԺԹ.	13.	**Մի՛ Մերձեսցի ի նա ձեռն.**
	ԺԹ.	15.	**Ի կանայս մի՛ Մերձենայք.**
	ԺԹ.	21.	**Գուցէ Մերձենայցեն հայել.**

Հասկանալի է, որ այս նույն սկզբունքով են դասավորված նաև գոյականները ու ածականները: Օրինակ՝

[74] Անդ, էջ թ:

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԱՇԻԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԹԱԴԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ ԸՐԱԳԿԵՐՑԻՍՑ

Ի ՄԻԱՐԱՆՈՒԹԵՆԷ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԾԱԾ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ԾԻԹՈՑ ՅԱՆՈՎԹԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1895

Զմյուռնիայի համաբարբառի անվանաթերթը

ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ

Գործք	ԻԲ. 28.	**Բազում գլխոց զԶինուորութիւնս զայս.**
Ա. Կորն.	Ա. 18.	**Զգեղեցիկ Զինուորութիւնն.**
Բ. Կորն.	Ժ. 4.	**Զի զէն Զինուորութեան մերոյ.**

ԽԱՐՏԵԱՇ

մագոյն.

Լեւտ.	ԺԳ. 36.	**Մի՛ դարմանեսցէ քահանայն վասն Խարտեաշ**
Ա. Թագ.	ԺԷ. 42.	**Զի էր պատանեակ Խարտեաշ.**

Ի տարբերություն Զմյուռնիայի համաբարբառի՝ այս համաբարբառում հոլովման ու խոնարհման ընթացքում բառերի կրած կերպարանափոխումները և կամ փոխարինումները մեկը մյուսով՝ չեն դիտվում որպես բառային տարբեր միավորներ, այլ ամփոփվում են մեկ՝ հիմնական բառի տակ: Հոլովման դեպքերում հիմնական է համարվում բառի եզակի ուղղական ձևը (անեզական բառերի համար՝ հոգնակի ուղղական ձևը), իսկ խոնարհման դեպքերում՝ անորոշ դերբայը: Օգտագործելով հենց այն միևնույն օրինակները, որ նշեցինք Զմյուռնիայի համաբարբառի մասին խոսելիս՝ ասենք, որ այստեղ **Աւուր**-ը բառային առանձին միավոր չի կազմում, այլ գնում է **Օր** բառի տակ. նմանապես **Կեր**-ն ու **Եկեր**-ը՝ **Ուտել**-ի տակ և այլն: Այսպես՝

ՕՐ

Ա. Մակ.	Է. 46.	**Անկան յայնմ Աւուր.**
	Է. 48.	**Արարին զՕրն զայն տարեկան մեծ.**
	Է. 50.	**Լռեաց երկիրն Յուդայ Աւուրս քանի մի.**
	Ը. 10.	**Կացուցին մինչև յՕրս այս.**

Կամ՝

Ա. Թագ.	ԻԸ. 20.	**Զի ոչ Եկեր հաց գտիւն ողջոյն.**
	ԻԸ. 23.	**Ոչ կամեցաւ Ուտել.**
	Լ. 11.	**Ետուն նմա հաց և Կերաւ.**
	Լ. 16.	**Ուտէին և ըմպէին և տօնէին.**

Այս նույն սկզբունքով էլ, դարձյալ, **Եբաց, Եբեր, Եթաց, Եթող, Ելաց, Ելից, Ելոյծ, Եհաս, Եհար, Եհեղ, Էջ** և նման բայական ձևերը, որոնք Զմյուռնիայի համաբարբառում որպես ինքնուրույն բառեր էին տեղավորված, այստեղ գնում են **Բանալ, Բերել, Թանալ, Թողուլ, Լալ, Լնուլ, Լուծանել, Հասանել, Հարկանել, Հեղուլ, Իջանել** բառերի տակ:

Դասավորման վերոնշյալ սկզբունքներն, ի հարկե, գիտականորեն ճիշտ են: Հեղինակը քերականագիտական հասկացողությամբ է առաջնորդվել՝ բառերի խմբավորման ու դասավորման իր սկզբունքները մշակելիս:

Զմյուռնիայի համաբարբառի համեմատությամբ, ինչպես ասվեց, այս համաբարբառն ունի որակական անվիճելի առավելություններ: Ունի նաև թերություններ, որոնցից մի քանիսի մասին իր ժամանակին խոսվել է «Արարատ» ամսագրի անանուն գրախոսության մեջ[75]:

Թերություններ ու բառերի պակասներ՝ անշուշտ ունի այս համաբարբառը: Պակասներն զգալի են հատկապես դերանունների և շաղկապների բնա-

[75] **Արարատ**, 1896, էջ 111—112:

գավառում: Նախդիրները (**զ, ի, ց, առ, ընդ, ըստ**) նույնպես չկան բառաշարում, թեև նախդիրներով կապակցված որոշ բառեր տեղ են գտել այնտեղ (**Զմտաւ ածել, Առ ականէ, Առ աչօք, Ընդ ակամբ հայել, Ընդ վայր հարկանել,** և այլն): Թեև ընդգրկված է մակբայների մի մասը (**Արդէն, Արտաքս, Արտաքուստ, Արտաքոյ, Իսկ և իսկ, Իսկոյն, Հազիւ, Ակամայ** և այլն), բայց շատ մակբայներ բացակայում են (**Անդ, Աստ, Երբեմն, Երբեք, Իբրեւ,** և այլն): Երբեմն նույնիսկ պատահում է, որ եղած բառի տակ բացակայում է այս կամ այն վկայությունը, թեև, մեր կարծիքով, այդպիսի պակասների թիվը մեծ չէ:

Այնու ամենայնիվ պիտի ասել, որ այս համաբարբառն իր ժամանակի համար լուրջ և գիտական առումով նկատելի երևույթ էր: Վերոնշյալ թերությունները կարող էին էական նշանակություն ունենալ լեզվաբանների համար՝ հայ լեզվի ուսումնասիրության հարցերում. բայց մատենագրական ուսումնասիրությունների համար նրա մակարդակը կարող էր հիմնականում բավարար համարվել՝ առ ի չգոյե լավագույնի: Դեռ այսօր էլ միջնադարյան հայ գրականության աղբյուրագիտական հարցերով զբաղվող բանասերներն անհրաժեշտորեն նրա օգնությանն են դիմում ամեն քայլափոխում՝ պ:սրզելու համար ,թե այս կամ այն գրվածքում օգտագործված այս կամ այն վկայությունն Աստվածաշնչի ո՛ր մասից է բերված և ի՛նչ նպատակով:

Այս համաբարբառը հիմնված է Զոհրապյանի հրատարակած դասական հարազատ բնագրի վրա:

Սուրբգրական համաբարբառների հայկական պատմության մեջ ժամանակով նորագույնը աշխարհաբար համաբարբառն է, որը 1963 թվականին լույս է տեսել Բեյրութում[76]: Ընդերկում է Հին և Նոր Կտակարանները:

Այս համաբարբառը հիմնված է հայ բողոքականության համար պաշտոնապես ընդունված արևմտահայ այն թարգմանության վրա, որն առաջին անգամ 1853 թվականին տպագրվել է Զմյուռնիայում, ամերիկյան միսիոնարության տպարանում, այնուհետև անթիվ հրատարակություններ է ունեցել որոշ սրբագրություններով և այսօր էլ շարունակում է անընդհատ վերահրատարակվել հայկական Սփյուռքում: Այս թարգմանությունը կատարվել է եբրայական և հունական բնագրերից, ուստի և կապ չունի Ե դարի մեր դասական գրաբար թարգմանության հետ:

Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ աշխարհաբար համաբարբառը հայագիտական առումով չի կարող ունենալ այնպիսի նշանակություն, ինչպիսին ներկայացնում են Աստվածաշնչի գրաբար բնագրին նվիրված համաբարբառները, քանի որ հիշյալ աշխարհաբար Աստվածաշունչը մեր ժամանակներում չունի կատարելիք, նույնիսկ հեռավոր նմանությամբ, այնպիսի դեր, որպիսին կատարել է անցյալում գրաբարը: Նա չունի կապեր մեր կյանքի պատմական ընթացքի հետ, մեզ դեպի մեր ապագան առաջնորդող գաղափարների ու տեսակետների հետ, մեր գրականության ու գիտության հետ: Պատմականորեն նա ոչ մի առնչություն չունի ժամանակակից հայության հոգևոր ու մշակութային կյանքի հետ, որովհետև, դարաշրջանի պայմանների բերմամբ իսկ, չէր կարող նրան տրված լինել հայության ազգային լուսավորության ու առաջադիմության փարոս դառնալ, նրա մտքի խոյանքների հա-

---

[76] «Համաբարբառ Աստուածաշունչ մատեանի Հին և Նոր Կտակարանաց, արդի աշխարհաբարով: Աշխատասիրեց Վեր. Վահան Գ. Սահակեան», Բեյրութ, 1963:

մար ներշնչման ու ոգեշնչման աղբյուր դառնալ, ինչպես իր ժամանակին դարձել էր գրաբար թարգմանությունը՝ բազմաթիվ սերունդների համար։ Պատճառն այն է, որ գրաբար թարգմանությունը ներքին՝ ազգային պահանջներով ու ջանքերով էր կյանքի կոչվել՝ ազգային նպատակներով, մինչ աշխարհաբար թարգմանությունը արտաքին՝ օտարի պահանջներով ու ջանքերով է կատարվել՝ օտար նպատակներով[77]։ Այդ իսկ պատճառով՝ նա ոչ միայն կատարելիք պատմական որևէ դեր չէր կարող ունենալ հայության կյանքում, այլև, նույնիսկ, ինքը չկարողանալով համընթաց քայլել ու զարգանալ նրա հետ, ետ է մնացել նրա արևմտյան գրական լեզվի զարգացման ժամանակակից մակարդակից։ Կարելի է արևմտահայ այդ թարգմանության Բեյրութի 1963 թվականի տպագրությունից[78] բերվող մի քանի օրինակներով ակներև դարձնել այդ իրողությունը։

Հարաբերյալի և հարաբերական դերանվան տրամաբանական կապը բացակայում է, օրինակ, հետևյալ նախադասությունների մեջ.

«Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ՚աղաղակեն» (Ղուկ. ԺԸ. 7)։ Պետք է լինի՝ **Իսկ Աստուած արդարութիւն պիտի չընէ՞ իր ընտրեալներուն, որոնք տիւ և գիշեր կ՚աղաղակեն իրեն։**

«Հարիւրապետի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր անոր» (Ղուկ. Է. 2)։ Պիտի լինի՝ **Հարիւրապետի մը ծառան, որ սիրելի էր անոր, ծանր հիւանդ էր և մահամերձ։**

Քերականական օրենքը չճանաչող նախադասություն է՝

«Պարզ պիտի տեսնես քու եղբօրդ աչքին մէջի շիւղը հանելու» (Ղուկ. Զ. 42)։ Անկապ և անիմաստ է՝ **տեսնել շիւղը հանելու։**

Եզակի ենթակայի հետ բայի հոգնակի ձևի կիրառման օրինակներ են՝

«Բոլոր ժողովուրդը իրեն կու գային» (Մարկ. Բ. 13)։

«Բոլոր ժողովուրդն ալ տեսնելով՝ զԱստուած կը գովաբանէին (Ղուկ. ԺԸ. 43)։

«Շատ բազմութիւն անոր ետևէն գացին» (Մարկ. Գ. 7)։

Բայական ձևերի սխալ ուղղագրման և դրա հետևանքով եղանակների ու ժամանակների շփոթման նմուշներ են տալիս հետևյալ նախադասությունները.

«Երանելի է այն մարդը որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալեր, ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար, և ծաղր ընողներուն նստած տեղը չնստիր» (Սաղմ. Ա. 1)։

«Եւ ան որ իր խաչը չառներ ու իմ ետեւէս գար» (Մատթ. Ժ. 38)։

---

[77] Անգլիական և ամերիկյան միսիոներական կազմակերպությունների ջանքերով կատարված այդ թարգմանության որպես հեղինակներ հանդես են գալիս միսիոներներ Էջերը (**J. B. Adger**), Դուայտը (**H. G. O. Dwight**), Հոմսը (**H. A. Homes**) և Ռիգսը (**Elias Riggs**), որոնք ունեցել են հայ «օգնականներ»։ Հմմտ. **T. H. Darlow and H. F. Moule**, „Historical Catalogue of the Printed Editions of Holy Scripture in the Library of the British and Foreign Bib'e Society", vol. II, New York, 1963, p. 94-98. «Պատմական ակնարկ Աստուածաշունչի թարգմանութեանց վրայ» (հրատ. Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության), Նյու-Յորկ, 1953, էջ 18-30։

[78] «Աստուածաշունչ գիրք Հին և Նոր Կտակարանաց», Բեյրութ, 1963։ Հրատարակությունն Մերձավոր Արևելքի Աստվածաշնչի Ընկերությունների (The Bible Societies in the Near East).

Այս **չքալեր, չկենար, չնստիր, չառներ** ձևերը սխալ են. պիտի լինեն՝ **չի քալեր, չի կենար, չի նստիր, չ՝առներ:**

Թարգմանիչներն այս տեղերում ժխտական ձևն օգտագործելիս իրար են խառնել սահմանական ներկայի եզակի 3-րդ դեմքը և ըղձական եղանակի անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմքը: Հմմտ. ճիշտ ձևերը.

Սահմանական եղանակ

Ներկա

Չեմ քալեր	Չեմ կենար	Չեմ նստիր	Չեմ առներ
Չես քալեր	Չես կենար	Չես նստիր	Չես առներ
Չի քալեր	Չի կենար	Չի նստիր	Չ՝առներ

Ըղձական եղանակ

Անցյալի ապառնի

Չքալէի	Չկենայի	Չնստէի	Չառնէի
Չքալէիր	Չկենայիր	Չնստէիր	Չառնէիր
Չքալէր	Չկենար	Չնստէր	Չառնէր

Եթե դժվար է համարվում կողմնորոշվել բայերի խոնարհման այս տրամաբանական ընթացքով, ապա կարելի է կողմնորոշվել նաև բառի արտասանական շեշտադրությամբ: Սահմանականում՝ ժխտականով խոնարհվող բայի օժանդակն է շեշտվում **(չի)** կամ, վերջինիս սղվելու դեպքում **(չ՝)**, բուն բայի առաջին վանկը. **չի՛ քալեր, չի՛ կենար, չի՛ նստիր, չ՝ա՛ռներ:** Իսկ ըղձականում՝ բայի վերջին վանկն է շեշտվում. **չքալէ՛ր, չկենա՛ր, չնստէ՛ր, չառնէ՛ր:**

Եվ դարձյալ՝ արևմտահայ գրական լեզվի համար խորթ և անընդունելի ձևեր են հետևյալները.

«Անոնց վրայ» (Ղուկ. ԺԸ. 7), փոխանակ՝ **անոնց հանդէպ:**
«Անոր վրայով» (Ղուկ. Ե. 15), փխ. **անոր մասին:**
«Այս բանին վրայով» (Ղուկ. ԺԸ. 1), փխ. **այս մասին:**
«Ասկէ ետեւ» (Ղուկ. Ե. 10), փխ. **ասկէ յետոյ:**
«Քանի մ՝օրէն ետեւ» (Մարկ. Բ. 1), փխ. **քանի մը օր յետոյ:**

Նմանապես՝ **«էրիկ»** (Ելք. ԻԱ. 22), **«որբևարի»** (Ելք. ԻԲ. 21), **«վայլել»** (Առակ. ԻԶ. 1), և այլն, փոխանակ՝ **ամուսին** (այր), **այրի, վայելել:**

Այսքանը բավական է տեսնելու համար, որ տվյալ թարգմանությունը լեզվի տեսակետից ևս մեկուսի է մնում մեր կյանքում:

Այսպիսով, ելնելով բոլոր հանգամանքներից, գտնում ենք, որ Աստվածաշնչի հիշյալ թարգմանության վրա հիմնված աշխարհաբար համաբարբառը էական նշանակություն չի ներկայացնում հայագիտության առումով: Այդ համաբարբառը կարող է միայն նյութեր տալ արևմտահայ աշխարհաբարի պատմության որոշ հարցերի ուսումնասիրության համար և հատկապես ծառայել արևմտյան հայերենով տարածվող բողոքական գրականության լեզվի հատկանիշներն ուսումնասիրելու:

Մինչև այստեղ մեր ներկայացրած թարգմանական և ինքնուրույն համաբարբառները բոլորն էլ երևան են եկել Հին և Նոր Կտակարանների բնագրային ուսումնասիրության հողի վրա, և դա, ի հարկե, շատ բնական էր, քանի որ սուրբգրական գիտությունները, ինչպես միջնադարյան քրիստոնեական աշխարհում ընդհանրապես, այնպես էլ Հայաստանում, հասարակության հոգևոր ու նյութական մշակույթի բոլոր թելերի հետ անխզելի կապերով կապված էին: Այդ երևույթը հասարակության զարգացման օրինաչափությունների մասն էր կազմում: Ինչպես արդեն տեսանք իր տեղում՝ միայն ԺԹ դարի վերջերին՝ Թադեոս վ. Աստվածատուրյանի Համաբարբառի հրատարակության առիթով է, որ որոշակիորեն հանդես եկավ այն գաղափարը, թե հայկական Աստվածաշնչի համաբարբառը կոչված էր բացառիկ դեր կատարելու նաև հայերեն դասական լեզվի հետազոտության ասպարեզում և ընդհանրապես հայագիտության մեջ: Այս գաղափարն արդեն ըստ ինքյան նոր բնույթ էր հաղորդում հայկական Աստվածաշնչի համաբարբառին՝ այն տեղափոխելով դեպի աշխարհիկ գիտությունների բնագավառը: Այս առումով՝ հայկական Աստվածաշնչի համաբարբառի գաղափարն առաջնակարգ նշանակություն էր ստանում հայագիտության համար: Այդ հարցին մենք կվերադառնանք սույն աշխատության վերջում:

Սրանով ավարտվում է հայ համաբարբառային գրականության այն հանգրվանը, որը բացառապես ընթանում էր սուրբգրական բնագրային հետազոտությունների գծով, ինչպես եղել է առհասարակ այն ժողովուրդների մոտ, որոնք միջնադարում ունեցել են քրիստոնեական գրականություն:

(Շարունակելի)

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում . 3

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 10

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը 13

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐՅԱՆ—Աստվածպաշտության խորհուրդը 16

Սուրբ Ծննդյան պատարագ և հայրապետական քարոզ Մայր տաճարում . . . 19

Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագների ձեռնադրություն Մայր Աթոռում . . . 21

Ամանորը հոգևոր ճեմարանում 24

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 27

Հանգիստ գերաշնորհ տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի 29

ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ—Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի պայծառ հիշատակին 33

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանը խոսում է՝ ս. Էջմիածնից և հայրենիքից իր տպավորությունների մասին . 35

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Ամաղու Նորավանքը 39

Հուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 45

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը 49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 28/XII 1971 թ.։ Ստորագրված է տպագրության 10/II 1972 թ.։

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 926

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.